

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎԿԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵԳԻՊՏԱՀԱՅՈՑ ԹԵՄ

Սույն թվականի հունվարի 14-24-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը հովվապետական անդրանիկ այցելությունը տվեց Եգիպտահայ համայնքին՝ Ղպտի Ուղղափառ Եկեղեցու հովվապետ Շընուդա Գ-ի և Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Չավեն արքեպ. Չինչինյանի միացյալ հրավերով:

Այցելության ընթացքում Նորին Սրբությունը եղավ Կահիրեում և Ալեքսանդրիայում, հունվարի 18-ի կիրակի օրը Կահիրեի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում իր հայրապետական պատգամը հղեց տեղի հավատավոր հայորդիներին, պաշտոնական հանդիպումներ ունեցավ տեղական իշխանությունների, ինչպես նաև քույր եկեղեցիների հովվապետների հետ, այցելեց Ալեքսանդրիայի իսլամական համալսարան:

ՄԵԿԵՆՈՒՄ

Հունվարի 14-ին, չորեքշաբթի օրը, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Չվարթնոց» օդանավակայանից հատուկ չվերթով մեկնեց Կահիրե: Մինչ մեկնումը, Նորին Սրբությունը Մայր Տաճարում, Իջման Սուրբ Սեդանի առջև, իր բարի երթի աղոթքն առաքեց առ Բարձրյալը, ապա հայրական հորդորներ տվեց իրեն ճանապարհող միաբաններին:

Վեհափառ Հայրապետի ջրախմբի մաս էին կազմում Արագածոտնի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, Սուրբ Հռիփսիմե վանքի վանահայր հոգեշնորհ Տ. Մովսես վարդապետ Մովսիսյանը՝ որպես գավապանակիր, արժանապատիվ Տ. Տիրայր քահանա Գրյըճյանը, ինչպես նաև ՀՀ Կրոնից գործոց պետական կոմիտեի նախագահ Լալար Սուրյանը:

ԺԱՄԱՆՈՒՄ ԿԱՀԻՐԵ

Տեղական ժամանակով ժամը 13.00-ին ինքնաթիռը վայրէջք կատարեց Կահիրեի միջազգային օդանավակայանում, ուր Նորին Սրբությանը և նրան ուղեկցող ջրախմբի անդամներին դիմավորելու էին եկել Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Չավեն արքեպիսկոպոս Չինչինյանը, Եգիպտոսում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Էդվարդ Նալբանդյանը, Ղպտի Եկեղեցու ներկայացուցիչները՝ էկումենիկ գործերի պատասխանատու Ամբասիժոյ եպիսկոպոսը, Ղպտի Եկեղեցու Պատրիարքարանի արտաքին հարաբերությունների և կրթական գործերի պատասխանատու Ամբաս Մուսա եպիսկոպոսը:

Դիմավորողների թվում էին նաև Կահիրեի Թեմական ժողովի ատենապետ Ա. Մեսրոպյանը, Կահիրեի գործադիր ժողովի ատենապետ Ն. Միմոնյանը, Ալեքսանդրիայի Թեմական ժողովի փոխատենապետ Ա. Միսքճյանը և գործադիր ժողովի ատենապետ Պ. Պալանջյանը, ինչպես նաև քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, Հայ Եկեղեցու հոգևորականներ, պաշտոնատար աղ անձինք, Նուբարյան Ազգային վարժարանի ուսուցիչներ և սաներ, մեծաթիվ ապգայիններ:

Ողջագուրանքից հետո, Հայոց Հայրապետին իր շքախմբով առաջնորդեցին դեպի օդանավակայանի բարձրաստիճան հյուրերի ընդունման պատվո հյուրասարահ, ուր փոխանակվեցին բարիգալստյան կարճ խոսքեր և տրվեց փոքրիկ հյուրասիրություն:

**«ՀՐԱՇԱՓԱՌ»-ՈՎ ՄՈՒՏՔ ԿԱՀԻՐԵԻ Ս. ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԵԿԵՂԵՑԻ**

Օդանավակայանից շքախումբն առաջնորդվեց դեպի Կահիրեի առաջնորդանիստ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ուր ժամը 14.00-ին Սմենայն Հայոց Հայրապետին ավանդական աղ ու հացով դիմավորեց կահիրեաբնակ գրեթե ողջ հայությունը, տեղական իշխանությունների և քույր Եկեղեցիների ներկայացուցիչները:

Նորին Սրբությունը թափորով, ամպհովանու ներքո և «Հրաշափառ»-ի ուղեկցությամբ, նաև ներկա հավատացյալ հայորդիների ծափողջույններով մուտք գործեց իր կառուցման 70 տարին վերջերս բոլորած Մայր եկեղեցի և ուղղվեց դեպի Սուրբ Խորան: Կանոնական աղոթքից հետո, Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելության ուրախ առիթով բարիգալստյան խոսք ասաց թեմակալ առաջնորդ Տ. Չավեն արքեպս. Զինչինյանը՝ առանձնակի շեշտելով այցելության կարևորությունը եգիպտահայ համայնքի կյանքում՝ այն որակելով որպես պատմական իրադարձություն:

«Մեզ Համար առանձնահատուկ օրեր են այս օրերը, քանզի Դուք, Վեհափառ Տեր, չմերժեցիք մեր Հրափիրը և այցելեցիք մեզ: Մեր բոլորի սրտերը լցվեցին Հոգևոր ուրախությամբ, որովհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսն էր գալիս այստեղ, որը մեր զաղութի տարեգրության մեջ արձանագրվելիք պատմական մի իրադարձություն է:

Սիրեցյալ Վեհափառ Տեր, Հայաստանյայց եկեղեցին ուրախ է, որովհետև «ինչքա՞ն բարի և գեղեցիկ են քարոզիչի ոտքերը»: Դուք եկաք՝ Ձեզ Հեռքերիւ Համար Աստուծո կենարար խոսքը, մխիթարելու Համար ձեր զավակներին՝ Հոգևոր զավակներին: Ծնորհագարդ Հայրապետ, իբրև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին Հավատարիմ, ամենքս սիրով սպասում ենք Ձեր ողջույնի և օրհնության խոսքին: Ձեր գալուստը երկնային արեգակի նման է, որ մեզ Հոգևոր ուրախությամբ է լցնում: Բարով եք եկել, Վեհափառ Հայրապետ: Ձեր Հոգևոր զավակները սպասում են Ձեր օրհնության խոսքին»:

Այնուհետև ներկաներին իր հայրապետական պատգամը հղեց Հայոց Հայրապետը: Ծնորհակալություն հայտնելով ջերմ ու սիրալիր ընդունելության համար՝ Վեհափառ Հայրապետը երախտագիտությամբ հիշեց իր երջանկահիշատակ նախորդներին ու Հայ Եկեղեցու նվիրյալ հոգևորականներին, ապգային բարերարներին և հավատացյալներին,

ովքեր իրենց գործունեությամբ անքնբեղի հետք են թողել ոչ միայն եկեղեցաշինության, այլև նախնայաց հավատքի ու ավանդների պահպանման, դրանք հետագա սերունդներին փոխանցելու գործում:

Նորին Սրբությունն ընդգծեց, որ, ի տարբերություն նախորդ անգամների, այսօր հնքն այցելում է իր հավատավոր հոտին ապատ ու անկախ Հայաստանից, ուր, խորհրդային կարգերի փլուզումից հետո, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ապրում է հոգևոր վերապարթոնքի մի նոր շրջան:

«Գերաշնորհ Սրբազան Հայր, սիրելի Հոգևոր եղբայրներ, Հարգարժան ղեսպաններ Հայաստանի անկախ Հանրապետության և եզիպտոսի Հանրապետության, սիրեցյալ Հավատացյալ ու Հավատարիմ Հայորդիք և զավակույն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո:

Այս իտրանի վրա, ձեր նախնիների դիմաց, Հավատքից բացված ձեր աչքերի առջև ես չեմ կարող խոսք ուղղել ձեզ՝ առանց երախտագիտության իմ Հայացքը ուղղելու դեպի երկինք, դեպի Արարիչը մեր, Ստեղծիչը Տիեզերաց, Պարգևիչը կենաց և Աղբյուրը բարեաց: Փառք Քեզ, Աստված, փառք Քեզ, ընդունիր Դու ծառայիդ անաչանքը, օրհնիր, զորացրու սիրտն ու միտքը, կամքն ու Հավատքը այս Հավատացյալ ժողովրդի: Փառք Քեզ, Աստված, փառք Քեզ, որ տվեցիր ինձ՝ խոնարհ ծառայիս այս մեծ երջանկությունը, որ իմ անձի մեջ չի կարող պարփակվել: Շատ փոքր է իմ անձը այդ մեծ պատվի և ուրախության Համար, որ շնորհեցիր ինձ մեկ անգամ ես՝ լինելու Համար աղոթակից եզիպտոսի ու Հայ ժողովրդի զավակների Հետ, այս գեղաշեն, Հայաոն և աստվածախոս Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցում:

Իսկապես, մարդ չի կարող այս իտրանի վրա բարձրանալ՝ այս ծանրագույն և ծայրագույն աստիճանի պատասխանատվությունը իր ուսերին վերցրած, առանց Հայցելու Աստծու օգնությունը: Ինձանից առաջ ուրիշ Կաթողիկոսներ եկել են եզիպտոս: Այսօր ես չեմ կարող այստեղ չոգեկոչել սրանից ինը Հարյուր տարիներ առաջ Գրիգոր Վկայասեր Կաթողիկոսի այցը եզիպտոս: Ձեմ կարող չհիշել 13-րդ դարի վերջին Ստեփանոս Հռոմկլայեցի Կաթողիկոսի գերեզմարությունը եզիպտոս: Եվ այս Հողի մեջ թաղվեց Հռոմկլայից եկած Ամենայն Հայոց Կաթողիկոսի մարմինը, որի շիրիմի Հետքերն անգամ չենք կարող գտնել այսօր: Այստեղ եկավ Պողոս Զ Սսեցի Կաթողիկոսը, երբ ընկավ Կիլիկյան թագավորությունը 1325 թվականին: Այս եզիպտական Հողի վրա էր, որ եկավ Հայոց վերջին թագավորը՝ Լևոն Զ-ն, Պողոս Զ Կաթողիկոսի Հետ: Եվ ինչպես չկարողանամ ես այստեղ զսպել Հուզումնա ու չհիշել իմ երջանկահիշատակ նախորդի՝ Վազգեն Ա Հայրապետի Հուզումնա ու չհիշել իմ երջանկահիշատակ Հարյուր երեսունմեկերորդ այցելությունը եզիպտոս: Ես նույն Աթոռի Հարյուր երեսունմեկերորդ գահակալն եմ: Ես գալիս եմ բոլորովին տարբեր, պայծառակերպված Հայաստանից, այլ ոչ թե գերեզմարյալ, ուրիշների կողմից նվաճյալ, ուրիշների կամքին ենթակա, ուրիշների քմահաճույքի խաղալիք Հայաստանից:

Ով Տեր, ինչպե՞ս չհայտնեմ Քեզ իմ երախտագիտությունը, որ այս վերջին դարերում առաջին Կաթողիկոսը՝ եղա, որ ընտրվեցի ազատ ու անկախ պայմաններում: Այս երեսույթը մեզ բոլորիս դնում է նոր կացության առջև, բոլորիս՝ թե՛ ամենափոքրիկ դպրոցականին, թե՛ պարզ գործավորին, թե՛ մտավորականին, թե՛ արհեստավորին, թե՛ վաճառականին և թե՛ արվեստագետին, լինի Հայաստանի մեջ, լինի Արցախի մեջ, լինի արտասահմանի մեջ: Ես չեմ կարող այլևս լինել այն, ինչ որ էի 1991 թվականից

առաջ և, նույնիսկ կարող եմ ասել, ինչ որ եղած էի 1988 թվականի փետրվարից: Այսօրվա փոփոխությունը, Հիմնական շրջադարձը ինչպե՞ս պիտի անդրադառնա մեր Հայության կյանքից ներս:

Եկեղեցին Հայոց, որի 1700-ամյակը տոնակատարելու ընթացքի մեջ մենք մտանք, կոչված է մի նոր առաքելության, այս նույն ժողովրդի, այս ազատ ու անկախ Հայաստանը ամրապնդելու համար վերակերտելու բարոյական, հոգևոր և ազգային դիմագիծը: Այլևս էջմիածին՝ մեր Հայոց Բեթղեհեմին մի նայեք իբրև պատմական հուշարձան: Էջմիածինը այլևս Հիշատակ չէ մեր անցյալի փառքերի, այսօր ներկայի հաստատություն է, որ բարեփոխիչ դերակատարության է կոչված: Առաջնորդ Սրբազանը լավ գիտի իմ այն արտահայտությունը, որ էջմիածինը հուշարձան չէ, էջմիածինը առաքելություն է: Ժողովուրդի կյանքի մեջ ներգործություն է, մասնավոր Հայաստանի մեր ժողովրդի, որ այնքան կարիք ունի հոգևոր վերազարթոնքի և ազգային վերապայծառակերպության, որպեսզի կարողանա 70 տարիների բռնակալ իշխանության հետքերը աստիճանաբար թործափել՝ իր Հայկական, քրիստոնեական իսկական դիմագիծը վերափրկելու ճանապարհի վրա:

Այսօր ես եկել եմ ձեզ մոտ և ի՞նչ խորհուրդ կա այս իմ այցելության մեջ: Առավոտ արթնանալ Արարատ լեռան բարձունքի նայվածքն արևին ուղղած Հայացքի տակ: Առավոտյան նայել և տեսնել Արագածի գագաթին անտեսանելի և անպարան կանթեղը Լուսավորչի: Այս առավոտ իջել եմ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար և աղոթել եպիսկոպոսների, վարդապետների, արքեպիսկոպոսների, սարկավազների և 110 ուսանողների հետ միասին և այս գալուստ ահավասիկ եզրկատական այս օրհնյալ հողի վրա ողջունել բոլորիդ հոգևոր ուժի բարոյական ազդեցության դիտակցության, կացության, արժանապատվության և նախանձախնդրության զգացումով: Ողջունում եմ ձեզ քաղցրաբույր սիրով և պարտքս եմ համարում Հիշեցնել ձեզ, որ այս բնմը, որտեղից այսօր այս խոսքը կուղղեմ ձեզ, և այս շքեղագույն Հայկական կերտվածքով եկեղեցին, որ իմ սրտի վրա ինքնին քարոզչություն է՝ առանց բառերի, այս եկեղեցին, այս խորանի 70-ամյակն է: Եվ այսօր ես պատիվ եմ զգում և պարտք, որպեսզի միասնաբար հարգանք ընծայենք Եղիայան Գրիգորի Հիշատակին՝ այս եկեղեցու բարեբարին և այս դադուկի ամենամեծ վառարկավոր և անձնապես չճանաչված, բայց կյանքի մեծագույն ուսուցիչներից մեկը եղող Թորգոմ Գուշակյան առաջնորդին և Պատրիարքին Երուսաղեմի Հայոց, որոնց կերտվածքն է նյութական և հոգեպետական անլուծելի զանգակատուն եղող Սուրբ Գրիգոր Լուսավորիչ այս եկեղեցին: Եվ, ի վերջո, չեմ կարող խոսքս փակել, առանց իմ խորին շնորհակալության և երախտագիտության խոսքս ուղղելու երկրի բարձրագույն աստիճանի պետական պատասխանատվությունը՝ ստանձնող անձին՝ ձեր վսեմաշուք նախագահին՝ Հոսնի Մուբարաքին:

Մերելիներ, մենք այսօր այնպիսի Հիմնական փոփոխությունների առջև ենք, որ պետք է մտածենք, թե ո՞ւր էինք և ո՞ւր հասանք: Մեկ խոսքով ուզում եմ ավարտել այսօրվա իմ առաջին արտահայտությունը իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս: Աշխարհի մեջ եթե որևէ բան է փոխվում, ուրեմն Աստուծո՞ւ ուժն է, որ փոխում է: Մենք պետք է փոխվենք: Աշխարհի փոփոխությունները Աստծուն թողնենք: Դուք պարտավոր եք ձեզ փոխել: Եթե մարդը ազգովին չի փոխվում, նշանակում է, որ ինքը պատմության զարգացման հետ կապ չունի: Մենք էլ պետք ունենք ներքին կերպարանափոխության: Այս բոլոր երևույթների դիմաց պետք ունենք ներքին հոգեկան

բյուրեղացման, հոգևոր, բարոյական, իմացական, ազգային, և այս է իմ այցելության նպատակը:

Այսօր բոլորս էլ կոչված ենք մեր հոգեկան աշխարհի մեջ կերպարանափոխության հրաշքը ապրելու: Եվ ես բոլորիդ անունով այսօր Համաշխարհային միության ներդաշնակ կյանքի առավել ևս զորացման Համար այս եկեղեցում ուղուժ եմ մեր այս զանգակատան մեջ դրված երեք զանգակների վրա արձանագրված բառերը ձեզ փոխանցել: Դրանք երեքն են. Հավատք, Հույս, Սեր: Աստուծո փառք երկինքն ի վեր, որ պահպանեց Հավատքը Հայուն և Հյուրընկալ այս փերուն վրա կանգնեց յուր տաճարները: Այս զանգակների խոսքերի հետևողությամբ ես կկամենայի, որ լինեի մարդկանց մեջ Հաճություն, սեր, ազգիս մեջ եղբայրությունը անբակ պահել Հավիտյան Հավիտենից. Ամեն»:

Ապա Գարեգին Ա Կաթողիկոսը անգլերենով ողջույնի խոսքեր հղեց նաև Հայաստանի Հանրապետությունում Եգիպտոսի նախկին արտակարգ և լիազոր դեսպան և այժմ՝ Եգիպտոսի արտաքին գործոց նախարարության պաշտոնյա տիար Սիմադ Ֆուադ Բաբանին, Ղպտի Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչներին:

Արարողությունը Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում ավարտվեց Վեհափառ Հոր «Պահպանիչ»-ով:

ԱԶԱՀԱՄԱՐՈՒՅՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Հավարտ հանդիսակարգի, թափուն ուղղվեց դեպի Ազգային Առաջնորդարան, որի գեղեցիկ դահլիճում Նորին Սրբությանն օրհնաբեր այցը Եգիպտոս ողջունեց տիար Սիմադ Ֆուադ Բաբանը՝ առանձնակի ջերմությամբ հիշելով հայ և արաբ ժողովուրդների անցած պատմական ուղին, փոխադարձաբար միմյանց նկատմամբ դրսևորած բարյացակամ վերաբերմունքը, քաղաքականորեն դժվարին պահերին մշտապես իրար աստար կանգնելու հանգամանքը:

Սրտի խոսքեր ասացին նաև հայ համայնքի ներկայացուցիչները:

Հանդիպման վերջում ներկա մեծաթիվ հավատացյալներն արժանացան Վեհափառ Հայրապետի աջահամբույրին և հայրական օրհնությանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՂՊՏԻ ՌԻԶՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԱՌԹՅՈՒՆ ՍՄԲԱ ՇԸՆՈՒԴԱ Գ ՊԱՏՐԻԱՐԷԻ ՀԵՏ

Նույն օրը, երեկոյան ժամը 18.00-ին, Նորին Սուրբ Օծությունը հանդիպում ունեցավ Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Շրնուդա Պատրիարքի հետ:

Երկու Վեհապետերի ջերմ հանդիպումը տեղի ունեցավ Պատրիարքարանում, ուր նախ փոխանակվեցին բարեողջույնի խոսքեր: Երկուստեք ժավալված մտերմիկ զրույցի ընթացքում շոշափվեցին քույր Եկեղեցիներին հույզող հարցեր, որոնք բարեկամական և փոխադարձ համագործակցության նոր ուղիներ են մատնանշում՝ ի շահ երկու Եկեղեցիների հավատավոր հոտի առավել բարգավաճման, բարօրության և ի Բարձրալի Աստված սիրո ու խոնարհության:

ԵԶԵՄԻԱՍՏԱՆ Ե ՈՒԿԱՆՈՒՇ ԻԿ ՇՏԱԳԱՆՈՒՄԸ ՍՈՓԻԱՅԻ



**ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄԸ
5.000- ԻՑ ԱՎԵԼԻ ՂՊՏԻ ՀԱՎԱՏԱՅՅԱԼՆԵՐԻՆ**

Քիչ ուշ Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսն իր շքախմբով, Ամենապատիվ Շրնուդա Գ Պատրիարքի հետ, թափոռի ուղեկցությամբ, առաջնորդվեց դեպի Ս. Մարկոս Մայր տաճար, ուր ներկա էին 5.000- ից ավելի դպտի հավատացյալներ:

Ղպտի Եկեղեցու քահանայապետը, մեծաթիվ հավատացյալներին ներկայացնելով Ամենայն Հայոց Հայրապետին, ի մասնավորի նշեց, որ Գարեգին Ա Կաթողիկոսը ոչ միայն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հովվապետն է, այլ նաև համայն քրիստոնյա աշխարհի կարևորագույն հոգևոր սյուններից մեկը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն անգլերենով (որ համաժամանակյա թարգմանվում էր նաև արաբերեն) քարոզ խոսեց՝ առանձնակի նշելով.

«Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, Նորին Սրբություն Շրնուդա Գ,

Շատ ուրախ եմ հանդիպել Ձեզ և Ձեր Եկեղեցու եպիսկոպոսներին: Բոլորիդ էլ Հայտնի է, թե արդեն որքան երկար տարիներ ենք մենք կապված միմյանց հետ, սկսած այն ժամանակներից, երբ դուք դեռևս Պատրիարք չէիք. իսկ ես էլ դեռևս Կաթողիկոս չէի: Ինձ համար Հոգեկան մեծ ձգտում էր անհամբերությամբ սպասել այն պահին, երբ ես կտեսնեի Ձեզ, և ահա տեսա Ձեզ այսօր Հետիեօթին, ժամանմանս առաջին իսկ օրը: Մենք՝ Հայերս, Հայերեն մի բառ ունենք: Ես փորձել եմ, չատ եմ ջանացել գտնել այդ բառի անգլերեն թարգմանությունը: Այդ բառն է կարոտը, որն իր մեջ մարմնավորում է ազգակցականության, կապվածության, մտերմության, սիրո, Հայրենաբաղձության գաղափարները: Եվ հենց այդպիսի զգացումներով է, որ ես եկա Եգիպտոս, ինչին անհամբերությամբ էի սպասում: Ես չնորհակալություն եմ Հայտնում Ձեզ և Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Հոգևոր կենտրոնին այն եղբայրական ողջույնի և ընդունելության համար, որին դուք ինձ արժանացրեցիք: Մենք մտադիր ենք է՛լ ավելի զորացնել և զարգացնել մեր Համերայխությունը, միությունը՝ հանուն մեր ընդհանուր քրիստոնեական հանձնառության միասնականության:

Ես կկամենայի չնորհակալություն Հայտնել նաև Եգիպտոսում մեր երկրի՝ Հայաստանի Հանրապետության գեսպանին:

Ես իմ ձայնն եմ բարձրացնում առ մեր Երկնավոր Հայրը՝ երախտագիտությունս արտահայտելու՝ Հոգեկան վերելքի, վեհացման այս մեծ պահն ինձ պարգևելու համար: Այսօր առավոտյան ես աչքերս բաց արեցի. բիրյիական Արարատ լեռան երկրի՝ Հայաստան աշխարհի երկնքի տակ, իսկ այսօր երեկոյան ահա ես աղոթում եմ Ձեզ Հետ միասին, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, Ձերդ Սրբություն Շրնուդա Գ Պատրիարք, մեկ այլ բիրյիական երկրում, որտեղ այցելել է մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հավատքը: Ես իրոք Հոգեպես շատ ուրախ եմ, որովհետև չէի կարող պատկերացնել, թե օրերից մի օր ես կլինեմ այն նույն եկեղեցում, որի օձման և օրհնության արարողության մասնակիցն եմ եղել 1968 թվականին: Իսկապես, մենք չենք կարող Հասու լինել Աստծու գործելակերպին, քանի որ, ինչպես ասվում է Հովհաննեսի Ավետարանում, քամին փչում է, և լսվում է նրա ձայնը, սակայն չգիտես, թե արդյոք այն գալի՞ս է, թե՛ գնում /մոտենու՞մ է, թե՛ հեռանում /ՀՈՎՀ. Գ 7-8/: Իրոք, Սբ. Մարկոսի այս տաճարը, որը խմատով

Մենք հաճախ ենք անցել մահվան հովիտով, սակայն դժուարություն հայտնենք Աստծուն, որ նա մեզ ուժ ու զորություն տվեց մնալ, ապրել և հարատևել որպես քրիստոնյա ազգ։ Ահա թե ինչն է, որ ես անվանում եմ Սուրբ Հոգու զորությունը։

Բարեկամներ, այսօր արգեն կան որոշակի մարդիկ, որոնք իրենց համարում են վերստին ծնված։ Գոյություն ունի «վերստին ծնված» կոչվող հատուկ մի աղանդ։ Կարծես թե մենք մշտապես չենք ծնվել ըստ ուղղափառ ավանդույթի, երբ Սուրբ Հոգին գալիս է մեր մեջ։ Ահա թե որտեղ է, որ մենք չպետք է համարենք մեր կյանքը կայուն, հաստատուն մի երևույթ, այլ՝ ընթացք, որը մշտապես վերանորոգման է ենթարկվում Հոգու կողմից։ Այսօր չնայած վարում ենք տեխնոլոգիական, արդյունաբերական, աշխարհայնացման տեսակետներից այսպիսի ուղղվածություն ունեցող կյանք, մեր երիտասարդությունն աստիճանաբար կորցնում է բանականությունը, խելքը, դատողությունը, գիտակցությունը, կամ այն հոգևոր արժեքները, որոնք գալիս են Աստծուց։ Ուստի, Արևելյան Ուղղափառ Եկեղեցիները պետք է համադործակցեն՝ դիմագրավելու այդ մեծ վտանգը՝ Արևմուտքի արտաքին ազդեցությունները, որոնք առաջնորդում են ժողովրդին դեպի մակերեսային կյանքի կենսակերպերին, այն է՝ դեպի այնպիսի կյանք, երբ Աստծու ներկայությունը բացառվում է։

Ես շատ երախտապարտ եմ Աստծուն՝ Հոգևոր վերանորոգման, վերածննդյան նշաններ տեսնելով մեր Արևելյան Ուղղափառ Եկեղեցիներում։ Ձեր ներկայությունն այսօր այստեղ, այս տաճարում, ինձ համար Հոգևոր վերանորոգման նշան է։ Մի քանի օր առաջ Երևանում՝ Հայաստանի մայրաքաղաքում, ես տեսա հազարավոր երեխաների, որոնք վերադառնում են այն դիտակցությանը, որ իրենք քրիստոնյա են, վերադառնում են անհայտին, քանի որ Սովետական աթեիստական վարչակարգի 70 տարիների ընթացքում կրոնը վերացրել էին մարդկանց կյանքից։ Ես շնորհակալություն եմ հայտնում Աստծուն, որ այդ մարտնչող աթեիստական վարչակարգն ավարտվեց։ Աստծուն երբեք չկարողացան հեռացնել մարդկանց կյանքից։ Քրիստոնեական կյանքի վերածնունդը մեր երկրում, Ռուսաստանում, Ուկրաինայում և այլ երկրներում Աստծու հաղթանակն է, և աթեիզմի պարտությունը։

Ուստի, ամենայն խոնարհությամբ, եկեք մեր ձեռքերը դնենք միմյանց ձեռքերի մեջ, որպեսզի հանդիպեն մեր սրտերը, և միասին աշխատենք մեր Տիրոջ միևնույն դաշտում, միևնույն այգում ցնծության, ուրախության ու նաև հավատարմության ոգով այն հավատին, որը նա է մեզ տվել։

Ուրեմն, միասնականության, ընկերության և եղբայրության դիտակցությամբ է, որ ես ձեզ եմ բերում Հայաստանի ձեռքերը ձեր եղբայրների և քույրերի նոր ոգու նոր շունչը։ Թող որ մենք միշտ ծնված լինենք Աստծու նույն ոգով, որովհետև դա նշանակում է, որ այն, ինչը ծնվում է մարմնից՝ մարմին է, իսկ այն, ինչը ծնվում է Հոգուց՝ Հոգի է։ Թող Սուրբ Հոգին միշտ ոգեշնչի ձեզ ձեր ամբողջ կյանքի ճանապարհին և առաջնորդի ձեզ ձեր բոլոր գործերում»։

ՊԱԵՏՈՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ «ՄԱՐԻՈՏ» (MARRIOTT)

ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ Ի ՊԵՏԻՎ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ

Նույն օրը, երեկոյան ժամը 21.30-ին, ի պատիվ վեհափառ Հայրապետի, «Մարիոտ» (MARRIOTT) հյուրանոցում, Կահիրեի և Սյեքսաստղիայի ազգային իշխանությունների կողմից տրվեց պաշտոնական

ընթրիք, որին ներկա էին Եգիպտոսում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Էդուարդ Նալբանդյանը՝ տիկնոջ հետ, քույր Եկեղեցիների և տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, թեմական և քաղաքային ժողովների ատենապետներ, երեսփոխաններ, մեծաթիվ ազգայիններ:

Բացման հանդիսությունից հետո, հանուն Ազգային իշխանությունների բարիգալստյան խոսք ասաց դոկտոր Սուրեն Բայրամյանը՝ միաժամանակ ընդգծելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այս այցելությամբ եգիպտահայոց վերանորոգվելու փաստը և շեշտեց, որ այս օրհնաբեր այցելությունը նոր լիցք պիտի հաղորդի եգիպտահայության ազգային, կրոնական և կրթական կյանքին:

«Վեհափառ Տէր, Զերդ Սուրբ Օծութիւն Տ. Տ. Գարեգին Ա Ազգընտիր Կաթողիկոս Ամենայն Հայոց,

Բարձրաշնորհ Տ. Զաւէն Արքեպիսկոպոս բարեջան Առաջնորդ եգիպտահայ թեմի,

Գերաշնորհ, գերապայծառ, Հոգեշնորհ և արժանապատիւ Հոգեւոր Հայրեր,

Վսեմաշուք դոկտ. Էտուարտ Նալպանտեան Արտակարգ և լիազոր Դեսպան Հայաստանի Հանրապետութեան և Համեստափայլ տիկին Նալպանտեան, Յարգարժան ատենապետներ պատկառելի թեմական և պատուարժան քաղաքական ժողովներու, Մեծարգոյ ազգային երեսփոխաններ և ազնուափայլ տիկնայք, Շքանշանակիր Հայրենակիցներ, Յարգելի ներկայացուցիչներ եգիպտահայ մշակութային, կրթական, բարեսիրական, մարզական և մանկոյ Հաստատութեանց.

Ցանուն եգիպտահայ Գահիրէի և Աղեքսանդիրոյ Ազգային իշխանութեանց, եգիպտոսի Հիւրընկալ և յաւիտենական Նեղոսի ասպնջական փիերուն կուգանք ողջունել շնորհաբեր այցելութիւնը Ամենայն Հայոց Ազգընտիր Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսին:

1998-ի սեմին իրականացած Հայրապետական այս օրհնաբեր այցելութիւնը կուղայ կրկնապատիկ խանդավառութեամբ տողորել եգիպտահայ ամէն մէկ անհատի Հայրենակարօտ բարախուն սիրտը, Ամենայն Հայոց Առաքելատիպ Հովուապետին Վեհափառ անձին ընդմէջէն ողջունելու Լուսաւորչահիմն Ս. Էջմիածնի Հոգեւոր առաքելութիւնը ու անոր արժանւորնոր դահակալին պատգամին ունկնդիր՝ Համազգային իտէալներու իրականացմանը նուիրաբերելու:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին Հայրապետական այս այցելութիւնը պիտի ըլլայ յուշարար և մղիչ ուժ, եգիպտահայ զանգուածներու մօտ ամրապնդելու ազգային և Հոգեւոր գիտակցութիւնը. անվերապահ տրամադրութիւններով զօրավիգ կանգնելու Համար նորանկախ Հայրենիքի Հզօրացման նպաստող բոլոր մակարդակներու պետական նախաձեռնութիւններուն:

Վեհափառ Տէր,

Սփիւռքահայ գաղթօջախներու առաջապահ միաւորներէն եգիպտահայ գաղութը, հպարտ իր փառաւոր անցեալով եւ ժամանակակից միասնական գործընթացով, կը շարունակէ անբաժան մասնիկը Հանդիսանալ Համընդհանուր Հայութեան գոյապայքարին— եւ՝ այս՝ փարաւոնեան քաղաքակրթութեան օրրան Նեղոսի փիերուն, օրինապահ քաղաքացիի Հայափայել ընթացքով, մատահոսութեան եւ Հովանաւորութեան արժանանալով եգիպտոսի

բարեխնամ եղբայրական կառավարութեան եւ անոր արդարամիտ եւ խաղաղասէր ղեկավարին՝ նախագահ Մոհամէտ Հոսնի Մուպարաքի:

Վեհափառ Տէր,

Զերդ Սրբութեան այցելութեան Հպարտառիթ այս առիթով, եգիպտահայութիւնը կուգայ վերանորոգել իր ուխտն ու հաւատարմութիւնը Հանդէպ մեր Սուրբ Եկեղեցիին, Սուրբ Էջմիածնին, անոր շնորհազարդ ազգընտիր գահակալ Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսին եւ այդ հաւատարմութեան ընդմէջէն հաստատելու հայութեան յաւերժական Հայրենիքին ու մեր նախահայրերէն մեզի ժառանգուած սրբութիւններուն տիրութիւն կատարելու գիտակցութիւնը. առաւել ամրապնդելու համար համայն հայութեան Արարատնալու վճռակամութիւնը, ամբողջական հայութեան եւ ամբողջական Հայրենիքի տեսիլքովը խանդավառ:

Վերանկախացած Հայրենիքն ու իր տագնապնեռով կլանուած Սփիւռքը փորձաքարային շրջան մըն է, որ կը բոլորեն ներկայիս: 20-րդ դարը իր վախճանին է հասած, եւ ազգովին պարտինք գիտակից եւ վճռակամ գործընթացով դիմաւորել 21-րդը:

Հայ Եկեղեցիի աղբիւրն է եղած Հայուն Հայրենասիրութեան եւ Հայրենապաշտութեան, ու առ այդ, անոր երանաշնորհ Հայրապետները ջահակիրը Հանդիսացած՝ Հազարամեակներու մեր պատմութեան ճամբան լուսաւորելու կոչուած մեր առաջնորդներուն:

Հայ Առաքելական Լուսաւորչաշունչ Եկեղեցին, իր 1700-ամեայ պատմութեան ընթացքին եղած է գրի ու գրականութեան, երաժշտութեան եւ երգի մշտաճոս ակունք: Ան եղած է նաեւ քաղաքական ղեկավար. բազմադարեան, պետականութենէ զուրկ մեր ճակատագրի ճամբուն վրայ Հայրենի Հող, ոգեկան կառոյց եւ Հայրենիք, ազգապահպանման մեր անգիշող պայքարի անմար փարոս ու միասնական դոյամարտի ներշնչիչ. Վարդանանց հաւատամարտին մինչեւ Սարդարապատի Հերոսամարտը:

Մեծ դեր եւ աշխատանք վերապահուած է տակաւին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին ու Հայ Հոգեւորականութեան:

Բազմաթիւ Հայրապետներ եւ Հոգեւոր Հովիւներ ժամանակի ընթացքին իրար յաջորդած են Հայ Եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներուն վրայ, սակայն անոնցմէ քիչերն են, որ իրենց մեծ գործերով կարեւոր դեր ունեցած են եկեղեցական եւ ազգային մեր տարեգրութեան մէջ, եւ կամ իրենց անընդելի կնիքը դրոշմած Հայոց պատմութեան լուսաշող էջերուն վրայ:

Եգիպտահայութիւնը հաւատաւոր Հետեւորդն է Հայ ժողովուրդի ժամանակակից Հոգեւոր պետերուն, գերադահութեամբը Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ գերագոյն Հոգեւոր պետին, Ս. Էջմիածնայ Աստուածահաճոյ գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Վերազարթնումի եւ իրապաշտ Հոգեփոխութեան Հպարտառիթ մեր օրերուն վստահ ենք, որ Հայաստանեայց Եկեղեցին, Զերդ Առաքինազարդ Վեհափառութեան լուսամիտ առաջնորդութեամբ եւ Ղեւոնդ Երէցեան յառաջապահ ընթացքով, բարձր պիտի պահէ հայութեան դրօշը, մէկ ժողովուրդ, մէկ Եկեղեցի եւ մէկ Հայրենիք հայադրոշմ նշանաբանով:

Այսու, կրկնակի կը վստահեցնենք ձեզ, Վեհափառ Տէր, թէ Հայ ժողովուրդը իր բոլոր հատուածներով, յարանուանական, գաղափարական եւ այլ միաւորներու խիտ շարքերով, Հեռեւորն է իր ազգընտիր Հոգեւոր գահակալին բոլոր ազգաշէն եւ եկեցաշէն նախաձեռնութիւններուն:

Պիտի գործենք միասնաբար, առանց վերապահությունների: Պիտի զոհաբերենք, առանց ակնկալությունների: Պիտի քայլենք կողք-կողքի, ձեռք-ձեռքի, առանց ընկրկումի, մինչև իրականացումը Համայն Հայության բոլոր իդձերուն:

Մենք փոքր ազգ ենք մեծերուն բաղդատմամբ, քանակական առումով, սակայն մեծերուն կողքին ենք դասուած որակական մեր սխրանքներով. եւ այս, շնորհիւ Հայ ժողովուրդի գաւակներուն ստեղծագործ Հանձարին ու զոհաբերութեան անսպառ գիտակցութեան, եւ որոնց արժանաւոր յառաջապահը կը Հանդիսանաք Դուք, Ձերդ Վեհափառութիւն:

Բոլորս գիտակից ենք, Վեհափառ Տէր, մեր հոգեմտաւոր եւ զգացական ամբողջ էութեամբ, թէ չկայ փրկութիւն, առանց Հայ ժողովուրդի միասնականութեան: Չկայ փրկութիւն, առանց Հայ եկեղեցւոյ ամրակուռ միասնական յառաջընթացին: Չկայ փրկութիւն Հայրենի հողէն, դրախտատաւանէն, Հայաստանէն դուրս: Բոլորս գիտուողներն ենք այս հաւատամբին, վայր Հայաստանէն դուրս: Բոլորս գիտուողներն ենք այս հաւատամբին, յառաջապահները այս ուխտին եւ հետեւորդները մեր առաջնորդ հոգեւոր եւ ազգային ղեկավարութեան: Այս ճամբուն վրայ Ձերդ Վեհափառութեան կը մաղթենք երկար եւ արեւշատ կեանք, յաջողութիւն Ձեր Հայրենանուէր եւ յինարար նախաձեռնութիւններուն»:

Հաջորդաբար սրտի խոսքեր ասացին նաև Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ջավեն արքեպս. Չինչինյանը և Եգիպտոսում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր գեսպան Էդուարդ Նալբանդյանը:

Այնուհետև ներկաներին իր հայրական օրհնությունները բացիւց Ամենայն Հայոց Հայրապետը, գոտեպնդող պատգամով ողջունեց եգիպտահայությանը, ուժ և կորով մաղթեց առաջնորդ սրբապան հորը և գաղութի պատասխանատու մարմիններին, անդրադարձավ Հայաստանի անկախ պետականությանը, Հայաստանյայց եկեղեցու այսօրվա կացությանն ու նախորդ տարիների հետևանքով դիմագրաված դժվարություններին.

«Սիրելի հոգեւոր եղբայրներ, Հարգարժան դեսպան Հայաստանի Հանրապետության և շատ սիրելի անդամներ եգիպտահայ գաղութի, որ քաջութիւնն ունեցաք պատասխանատվութիւն ստանձնելու այս գաղութի կյանքի մեջ:

Նախ ուղում եմ բոլորիդ Հայտնել խորին շնորհակալութիւնս և հոգեկան գոհունակութիւնս, որ առաջին ընթրիքս եմ անում այս հողում իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ ընտրանի մեկ հասարակութեան հետ: Ձեզանից ոմանք ինձ անձնապէս ծանոթ են և մնացածից էլ հոգեկան Հաղորդակցութեամբ զգում եմ, որ մենք նույն առաքելութեան նվիրյալներն ու գինվորյալներն ենք: Այսօր հունվարի 14-ն է: Հայաստանի մեջ այս տարի միայն անդրադարձաւ, որ սովորութիւն կա, որ նոր տարին մեկ օրով և կամ երկու օրով չի ավարտվում, տոնում ենք ավելի քան 14 օր:

Այսօր հունվարի մեկն է՝ ըստ Հին տոմարի: Միտս են գալիս Սիամանթոյի հետեւյալ խորաթափանց տողերը. «Կաղանդի երեկոն է, 40 անձ մեկ տան զավակ բոլորակի, մեկս մեկու նայվածքի մեջ յուրաքանչյուրս իր դրախտը կտեսնեն»: Ես այս խոսքերը մեջ բերեցի 31-ի գիշերը, ճիշտ կեսգիշերին, երբ ողջ Հայաստանի ժողովրդին խոսքս ուղղեցի, նախադահի խոսքից առաջ: Յուրաքանչյուր Հայ մյուս Հայի աչքի մեջ երբ իր դրախտն է տեսնում, այդ

ազգը մահ չունի: Մեր ունեցած ամբողջ ուժը և Հարստությունը ո՛չ Հոդի տակ է, ո՛չ օգուժ և ո՛չ էլ ծովում, մեր ուժը մենք ենք: Եվ այս իրիկուն, ձեզ Հետ ես Հոետորական ճառ կամ զգացական արտահայտություններով լեցուն խոսքեր չէ. որ ասելու եմ: Մեր Եկեղեցին Հայության ներկա կյանքում իր մասնակցությունը, պատասխանատվության զգացումը ունի: Մարդ երկու տեսակի գործ կարող է անել. մեկը այն է, որ պարտավոր է անել և անում է իր ու իր ընտանիքի ապրուստը Հոգալու Համար՝ լինի արհեստավոր, վաճառական, տնտեսագետ, գործավոր...: Գործ է անում վասն ապրուստի:

Երկրորդ տեսակի գործն այն է, երբ կամավորապես պատասխանատվություն է ստանձնում, որ իր և իր ապրուստի Համար անհրաժեշտ չէ, կարևոր չէ, այլ ստանձնում է, քանզի սիրում է, և իր ազգային ըմբռնման, ինքնըմբռնման արտահայտությունն է: Հետևաբար, ձեր գործերից բացի, երբ կամավոր ծառայություն եք ստանձնել՝ Եկեղեցուն, մշակույթին, դպրոցին, Հայրենիքին, Եգիպտոսի մեր գաղութի այլազան ոլորտներին բերելու ձեր մասնակցությունը, շնորհավորում եմ ձեզ և շնորհակալություն Հայտնում: Այս տեսակ մարդն է, որ պատմություն է կերտում: Իսկ միայն ապրուստով ապրող մարդը պատմություն է հիշում: Դրա Համար ես ձեզ այսօր նկատում եմ այն անձերը, ովքեր պատմության մեջ մայր պողոտայով են քայլում, այլ ոչ թե մայթով: Մայր պողոտայով ձեռք-ձեռքի, սիրտ-սրտի, միասնական նպատակով քայլելն է, որ մեզ տեղ կհասցնի: Մայթի վրայով քայլելը, գոգոհելը, բամբասելը, սրանք կյանքի մեջ ոչ մի դրական բան չեն բերում: Ես իմ մանկության օրերից ի՞նչ գեղեցիկ երգ եմ լսել՝ Ով որ քաջ է, ի՞նչ կսպասե: Այս է մեր պատմության ամենանվիրական օրը:

Ես ձեզ Հետ իբրև պատասխանատվություն ունեցող և ստանձնած մարդկանց Հետ, ուզում եմ զրույցի մտնել և իմ խոհերը ձեզ Հետ կիսել: Այլևս անցավ այն ժամանակը, երբ մենք զգացական էինք: Մանկությանս օրերից սկսած, Հայրենիքը մեզ Համար սրբություն էր: Մենք Հայրենասեր դարձանք առանց Հայրենիքը տեսնելու: Ես այդ սերնդին եմ պատկանում: Ահավասիկ, գրեթե երեք տարի է, ինչ ապրում եմ Հայրենի Հողում՝ պատասխանատվության այս աստիճանի վրա: Ուզում եմ իրատես լինենք, ազգային անկախության Հոետորական, գաղափարական այդ պատկերը վերածենք իրատեսական, գործնական, ազգակերտողական փիլիսոփայության ըմբռնողության և գործելակերպի: Դուք մեծավ մասամբ գործի մարդիկ եք և մինչև գործ սկսելը ծրագրում եք ձեր գործը: Այս է անհատի, ազգի կյանքի Հաջողության ամենակարևոր սկզբունքներից մեկը: Եվ մենք պատմության մեջ թերացել ենք մեր. միտքը, կուռ տրամաբանությունը գործածելու մեջ և առավելաբար զգացական ենք եղել: Ես անգլոսաքսոնական աշխարհում ուսումնառեցի, չփվեցի եվրոպական կամ արևմտյան ազգերի Հետ, էկումենական Հարաբերության մեջ էլ որոշ բաներ սովորեցի և ուզում եմ դրանք ազգիս, Եկեղեցուս, Հայրենիքիս կյանքի Հետ խառնել, մինչև վերջին շունչս, որ Աստված ինձ տա: Ի՞նչն է այդ մտածումներից առաջինը: 30.000 քառ. կմ Հող ունենք: Սա պատասխանատվությունն է Հայի: Ազատությունը և անկախությունը բառեր չեն միայն, բանաստեղծություն չեն, այլ՝ կյանք, չոչափելի Հող և դրանից Հանվելիք կյանք, ապահովության սկզբունքով և հառաջդիմական հեռանկարով ապրվելիք կյանք: Եվ այդ Հողը Հայրենիք չէ, մինչև որ այն չդարձնենք Հայրենիք:

Մի սքանչելի խոսք ունի Էդուարդ Բալադուր, Ֆրանսիայի կարևոր վարչապետներից մեկը: Ասում է. «Ֆրանսիան բնության ստեղծումը չէ, այլ՝

պատմության»։ Հայաստանը ի՞նչ է։ Եթե Հայաստանից մի բուռ հող վերցնենք, լցնենք տոպրակի մեջ և մեկ բուռ էլ վերցնենք Ամերիկայից և ուղարկենք այնպիսի ամենամեծ լաբորատորիան, տեսնեմ ո՞վ կլինի այն գիտնականը, որ կարողանա ասել, թե ո՞ր հողը որտեղից է բերված։ Ձի կարող ասել։ Հողը հող է, դրա վրա դրված կնիքն է, խառնած քրտինքը, որ այն նվիրականացնում է։ Եվ ես հիմա ասում եմ, որ քրտինքի բաժինը ավելին է, քան արյունինը։ Մեր ազատագրության պայքարի մեջ մեր ֆեդայիների արյունը ավելի թափվեց, քան մեր քրտինքը։ Այսօր մեր քրտինքը ավելի՛ պետք է թափվի։ Եվ եթե պետք լինի, արյունը չենք խնայի։ Սակայն քրտինքն է այժմ Հայրենաշինության հեղուկը։ Այստեղ պետք է մեկ բառ օգտագործեմ, չգայթակղվեք։ Ես չեմ հավատում այլևս Հայրենասիրության բառին, չեմ հավատում եկեղեցասիրություն բառին։ Ես հավատում եմ Հայրենակերտության, եկեղեցաշինության բառերին։ Ի՞նչ է նշանակում սեր։ Հայրենիք սիրել ի՞նչ է նշանակում, եթե այդ Հայրենիքի մեջ ես անելիք չունեմ, ապա այդ սերը ի՞նչ արժեք ունի։

Աստված, որ սեր է, մարդ եղավ։ Ծնվեց, ապրեց, տառապեց, խաչվեց։ Սերն առանց կյանքի, առանց գործի Միջնադարի արտահայտություն է, զգացական խոսք է ինքնամխիթարություն։ Մեծ բառը, որ ես գիտեմ, հանձնառություն բառն է։ «Ասա ինձ՝ ո՞վ է բարեկամդ, ընկերդ, կասեմ, թե ով ես դու», - ասում է ժողովուրդը։ Ես այլ կերպ կասեմ այդ խոսքը։ Ասա ինձ՝ ինչին ես արժեք տալիս, կասեմ՝ ով ես դու։ Որտեղ դնում ես սիրտդ, այնտեղ է քո գանձը, արժեքը։ Եվ այսօր 30.000 քառ. կմ հողը ո՛չ թուրքի պատասխանատվությունն է և ո՛չ էլ սովետի, հայի պատասխանատվությունն է։ Ես տրամաբանական վերլուծում եմ աշխատում կատարել և ոչ թե ընդհանուր մտածական, զգացական արտահայտությունների կատարել։ Այդ 30.000 քառ. կմ հողի վրա, եթե ժամանակին թերանայինք, կասեինք, ո՞րն է մեր հանցանքը, հրամանը վերևից է, հյուսիսից։ Սակայն այժմ ի՞նչ պետք է ասենք, եթե մի սխալ բան պատահի Հայաստանին կամ վատ, ո՞ւմ պետք է մեղադրենք, ասացե՛ք ինձ։ Ուրիշներին մեղադրելով բան չենք շահի։ Նայենք մեր սրտերին։ Այսօր երբ ունեցանք, մեր երազի մարմնացումը, որ մեր սերունդների երազանքն է եղել։ Նրանք այսօր չկան, բայց մենք՝ կանք։ Վաճան թեքեյանը, Արշակ Ալպոյաճյանը, Օհանջանյանը, Եանթը... Հայրենիքը իրենք իրենց կյանքի մեջ ունեին։ Նրանք երկնքից որքան են հրճվում այժմ։

Իսահակյանի խոսքերով ասած, Հերթը մի պահ քոնն է, ահա, դու էլ նայիր Արարատի սեզ ճակատին և անցիր։ Նայել Արարատին, նշանակում է խառնվել նրան, ոչ թե որպես հյուր նայել գիտականությամբ։ Եթե այսօր այդ չէ՛ մեր ըմբռնումը, Հայրենասիրությունը, ազգասիրությունը ոչ մի արժեք չունեն։

Այսօր ժամն է գործի, այսօր Հայրենիքը այն է, ինչ որ շատերը երազել են։ Թուրքաշինչուրս իր բաժինը պետք է փնտրի։ Ես հավատում եմ, որ մենք՝ հայերս, եթե երբեք մեր կարիքների ամենաէականը ուզենանք այսօր ընտրել, ապա պետք է մարդուն ընտրենք։ Հայաստանը, Հայաստանայաց եկեղեցին մարդկանց կարիք ունի։ Եթե ես էլ պատասխանատվության բերումով ապրած չլինեի Հայաստանում, ձեզ պես չէի հասկանա, թե անաստվածության և հակաազգային գաղափարաբանությունը, խորհրդային բռնական իշխանությունը որքա՞ն ավեր է գործել մարդու նկարագրի վրա։ Մարդն արժեք չունի։ Տասնյակ հազարներով մարդկանց արքայացին։ Որքա՞ն աղետ

գործվեց Հայաստանում 70 տարիների ընթացքում: Այդ վիճակից դուրս պետք է գանք: Եթե դուրս չգանք, ապա ոչ մի նյութական ուժ էի կարող մեզ փրկել: Մարդն է արարչագործության պսակը: Ինչպես Աստվածաշունչն է ասում. «Եւ երկիր էր աներեւոյթ եւ անպատրաստ, քանդի մարդ չէր, որ գործէր գերկիր» (Մենդ. Ա 2): Վայրի Հողը անտառ կդառնա, պարտեզ, եթե դու ցանկանաս:

Այսօր մենք պետք ունենք մարդու կերպարանափոխված կերպարի, որ Հայի Հարազատ ապրումների՝ կրոնական, ազգային, բարոյական, Հոգևոր, մարդկային, ընդհանուր Հայության ինքնըմբռնումի Համապատասխան գործոնը լինի Հայաստանը: Այս է ամենաէականը, որին պետք է լծվենք մենք ամբողջությամբ, ուր էլ որ ապրենք:

Ընդունվելով դարեմանք, կերպարանափոխվեցի և դարձա մեր Եկեղեցու սպասավորը: Այսօր, այս ընտրանի Հասարակության առջև չեմ կարող առանց Հոգվելու չհիշել եգիպտահայ Հանգուցյալ Մերջանյան Տիգրանին, որ ուսմանս բարերարն է եղել: Ո՛չ տեսել էի նրան և ո՛չ էլ նրա մասին քան գիտեի: Մի օր տեսուչը կանգնեցրեց ինձ և տեղեկացրեց, որ նա իմ բարերարն է: Տարեկան 500 եգիպտական ոսկի էր տրամադրում իմ ուսման Համար: Երբ ինքը մահացավ, երեք ժառանգորդները Հանձն առան այդ գումարը տրամադրել: Իմ մյուս ընկերները ևս նման բարերարների շնորհիվ սովորեցին և այսօր ազգին են ծառայում: Եթե մարդիկ իրենք վեր չլինեն նյութեղեն աշխարհից, ապա նյութի Հետ նյութ կմնան և նյութով էլ կանցնեն: Նյութը վերածեք Հոգու: Նյութական արժեքները մարդկային բարձր նպատակների Համար գործածելն է կյանքի ամենաբարձր իմաստը, որը տալիս է գերազույն երջանկության զգացումը: Չեմ կարող մոռանալ Մերջանյանի տիկնոջ ժպիտը և այն, որ նրանք կարող էին այդ 500 եգիպտական ոսկին իրենց Հաճույքների Համար օգտագործել, սակայն նրանք մի գործ արեցին, որ նյութական չափով չի չափվում:

Վերջերս դարձյալ կարդացի Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցի, Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի, Կոմիտասի մասին: Պարզ սարկավազներ էին էջմիածնում, սակայն, ուսանելով, վերադարձան և իրենց գիտելիքները դրեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայրենիքի զոհասեղանին ի սպառ: Մարդն է նյութին արժեք տալիս: Հետևաբար, այսօրվա իմ խոսքը այն է, որ մենք գիտնանք այլևս տրամաբանական առողջ մտածումներով մեր ազգային մասնակցությունը բերել ամբողջական Հայության վերակերտումը արտահայտելու այս նոր Հրամայականի առջև, որ բոլորինս է, ոչ թե Հայաստանի նախագահինը կամ վարչապետինը և կամ մեկ ուրիշինը, այլ բոլորինս է:

Ժողովրդի մեջ Հոգեբանություն կա պետությունից սպասել: Ո՞վ է պետությունը. դու ես, նա է, ես եմ: Եվ ի՞նչ գեղեցիկ է այն խոսքը, որ Ջոն Բենեդիկտ է ասել. «Ազգը ո՞վ է, երկնքից եկող դրամներից կազմված բա՞նկ է՞» մեր մտածումի, գաղափարի, Հանձնառության, մասնակցության պտուղն է՞: Այսու, մենք այսօր պետք է մեր կյանքի սկզբունքը որդեգրենք՝ զգացականությունից Հետզհետե անցնել դեպի տրամաբանական քաղաքականություն: Չկարծեք, թե ես զգացում չունեմ: Զգացումն իր տեղին: Առանց զգացումի մտածումը չոր, ցամաք քանի կվերածվի: Սակայն կարողանանք ներդաշնակել, զգացականությունը ենթարկել մեր տրամաբանական ուժին:

Երկրորդ՝ ամենակարևոր ասելիքս այն է, որ իմացեք վստահել պատասխանատու անձերին: Շատ բան կգրվի և կխոսվի, սակայն Հարցրեք,

թե ո՞վ է գորողը և խոսողը: Եթե ես ուզենամ ձեր գործի մասին գաղափար ունենալ, ձեզանից ավելի լավ աղբյուր կարո՞ղ եմ ունենալ: Մեկը գալիս է Հայաստան, ինչ-որ բան է տեսնում և հոգված գրում: Մակերեսային, մասնակի: Սակայն այնտեղ ապրողը, ժողովրդի հոգսը իմացողը երբեք մակերեսային չի խոսի նրանց մասին: Սխալ քաղաքականություն կլինի Հայաստանաբնակ Հայերի Համար, սպասել, որ արտասահմանցի Հայերը գան և իրենց փոխարեն իրենք գործ անեն: Այդ ճիշտ չի լինի: Ոչ էլ արտասահմանցին թող կարծի, որ ինքը կարող է անել այն գործը: Այժմ ի՞նչ է մնում մեզ անելու: Հայաստանցու ձեռքերի մեջ դնել մեր ձեռքերը և ասել՝ աշխատեցրու ձեռքը: Եթե ձեռքը մեկն է կարող անել, թող երկուսը անի, սակայն զորակցությամբ:

Եթե այս չլինի մեր քաղաքականությունը, ապա ինչպե՞ս կարող ենք Հայաստան կերտել: Ներքին կարողականությունը մշակել մարմնի Համար ամենակարևորն է, ոչ թե դրսից եկող դեղերով ապրելը:

Անկախությունը, փառք Աստուծո, ունեցանք՝ առանց արյուն թափելու: Միջազգային դեպքերը այնպես դասավորվեցին, որ Սովետական Միությունը խորտակվեց: Մենք մեր հողի լիիրավ տերը դարձանք: Իսկ այժմ այն հայրենի գարգացնենք, մեր մտածողության չափանիշներով: Սա է մեր առաջնային պարտավորությունը Հայաստանի կամ արտասահմանի մեջ: Եվ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որի մասին շատ եմ խոսել, այսօր լծված է մեկ գործի՝ մարդ պատրաստելու գործին և մեր ժողովրդի մեջ բարոյական ըմբռնումները առողջացնելու գործին: Ես ինձ հետ Հայաստանից բերել եմ 1700-ամյակին նվիրված տեսաբերիզներ: Մեր ժողովուրդը պետք ունի վերստին քրիստոնեական հավատքի ներգոր ուժը, մարդու ստեղծագործականությունը դաստիարակությամբ մշակել և՛ քաղաքացիությամբ, և՛ գործունեությամբ: Եթե այս առողջ տվյալներով չչարժվենք, ինչո՞վ պետք է Հպարտանանք, անցյալո՞վ:

Բարեկամներս, մենք անցյալը սիրում ենք, անցյալը հարգում ենք, սակայն նրանում չենք կարող բանտարկվել: Հին-Հին դարուց հիշատակ չէ Հայաստանը: Այսօր ապրող, շնչող երկիր է: Ամենաերջանիկ օրերիցս մեկը Նյու Յորքի Միացյալ ազգերի կազմակերպության շենքի առջև մեր եռագույնի բարձրացման օրն էր: Եվ երբ այդ շենքում Armenia բառով սեղան դրվեց, ես ինքս ինձ զգացի ազգերի ընտանիքի մեջ ինքնահարգելի և հարգարժան ազգի մասնիկ: Միտքս էլ գնաց նախաքրիստոնեական շրջան, երբ Դարեհ Թագավորը իր գրաված երկրների մեջ առաջին անգամ Armenia բառը գրեց Բիհնթունյան արձանագրության մեջ: Դրանից առաջ մենք Ուրարտու էինք, Հայասա...: Այդ բառը առաջին անգամ գրվել է Բիհնթունյան արձանագրության մեջ: Ես սրանից երկու տարի առաջ գնացի և նստեցի այդ սեղանի առջև և լիաթուք շնչեցի Հայությունս: Հայրենիքս ազգերի շղթայի մաս կազմեց: Այսօր այլևս մասնավորությունները, նեղմտությունները, փոքրիկ հաշիվները չպետք է մեր ուժերը սպառեն: Մինչև օրս Հայի կտորտանքներ էինք՝ եգիպտահայ, տաճկահայ, ռուսահայ, լիբանանահայ..., սակայն այժմ մի ամբողջականություն կազմած, պետք է նոր նվաճումների ընդառաջ գնանք: Կմաղթեմ ամենքիդ ուժ և կորով՝ այս պատվաբեր գործի հաջող ընթացքի կազմակերպման և ավարտին հասցնելու համար»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ ԱՄԻ ՄՈՒՍԱՅԻ ՀԵՏ

Հունվարի 15-ին, առավոտյան ժամը 10.30-ին, Նորին Սուրբ Օծությունն իր շքախմբով, ինչպես նաև Եգիպտոսում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Էդուարդ Նալբանդյանի ուղեկցությամբ, այցելեց Եգիպտոսի արտգործնախարարություն, ուր հանդիպում ունեցավ արտգործնախարար Ամր Մուսայի հետ:

Մեկժամյա զրույցի ընթացքում Հայոց Հայրապետն իր խորին շնորհակալությունը հայտնեց Եգիպտոսի բարեխնամ իշխանություններին՝ տեղի հայ համայնքի համար ստեղծած բոլոր նպաստավոր պայմանների համար, որոնց շնորհիվ օրավուր ծաղկում ու բարգավաճում է ապրում այն: Վեհափառ Հայրապետը նշեց, որ բավաճախիվ հայազգի վաժակներ իրենց կարելին են արել Եգիպտոսի վարգացման գործում՝ դրանք լինեն պետական բարձր պաշտոնյաներ, թե պարզ աշխատավորներ:

Այնուհետև Նորին Սրբությունն անդրադարձավ այսօրվա Եգիպտոսի և Հայաստանի փոխհամագործակցությանը՝ շեշտելով, որ պատմական փառավոր անցյալ ունեցող երկու երկրները միմյանց կարող են ավելի լավ հասկանալ:

Իր հերթին պարոն նախարարը բարձր գնահատեց հայ համայնքի դերը Եգիպտոսի տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքում՝ ի մասնավորի նշելով, որ հայազգի վաժակները զբաղեցրել են պետական բարձր պաշտոններ, եղել են նաև քաղաքական նշանավոր գործիչներ՝ արտգործնախարարներ, պետական, հասարակական կարևորագույն դեմքեր: Նրանցից հատկապես առանձնակի սիրով հիշատակվեց Պողոս Նուբար Փաշա Նուբարյանը:

Հանդիպման վերջում փոխանակվեցին հուշանվերներ: Նորին Սրբությունը արտգործնախարարին նվիրեց «Էջմիածնի գանձեր» շքեղապարզ ալբոմը, ինչպես նաև «Գարեգին Ա» հուշամեդալը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ՝ ՏՐՎԱՍ ՆՈՐԻՆ

ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՆՈՒԴԱ Գ ՊԱՏՐԻԱՐԷԻ ԿՈՂՄԻՅ

Օրվա երկրորդ կեսին, ժամը 14.00-ին, ի պատիվ Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի, Ղաթի Եկեղեցու հովվապետ Նորին Սրբություն Երնուդա Գ Պատրիարքի կողմից տրվեց պաշտոնական ճաշ, որին ներկա էին Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպիսկոպոս Զինյիյանը, Եգիպտոսում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Էդուարդ Նալբանդյանը, ՀՀ կրոնից գործոց պետական կոմիտեի նախագահ Լալար Սուրյանը, Վեհափառ Հոր շքախմբի մյուս անդամները, քույր Եկեղեցիների և տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, ապգայիններ:

Ճաշկերույթն անցավ մտերմիկ մթնոլորտում: Վերջում փոխանակվեցին հուշանվերներ: Գարեգին Ա Հայրապետը Ղաթի Եկեղեցու Հովվապետին նվիրեց հովվապետական գավապան՝ ի նշանավորումն քույր Եկեղեցիների երկու Հայրապետների անմոռանալի հանդիպման և ի դրսևորումն եղբայրական սիրո:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՆՆԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԿԵՆՏՐՈՆ՝ ԱՂ-ԱՉՀԱՐ՝

Նույն օրը Նորին Սուրբ Օծությունն իր շքախմբով այցելեց սուննի մուսուլմանների հոգևոր գլխավոր կենտրոն՝ Ալ-Ալիաթ, և հանդիպում ունեցավ կենտրոնի հոգևոր առաջնորդ, Ալ-Ալիաթի համալսարանի հոգևոր պետ Շեյխ Սայետ Թանթաուիի հետ: Սակնք, որ Ալ-Ալիաթը սուննի մուսուլմանների հոգևոր կենտրոնն է, ուր տարբեր բաժանմունքներում ուսանում են շուրջ 1,5 միլիոն երիտասարդներ:

Հանդիպմանը ներկա էին նաև եգիպտահայոց թեմի առաջնորդ Տ. Չավեն արքեպս. Չիլիկյանը, Եգիպտոսում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Էդուարդ Նալբանդյանը, Հայաստանի Հանրապետության Կրոնից գոյծոց պետական կոմիտեի նախագահ Լավար Աուրյանը:

Երկուստեք ծավալված բարեկամական կրոնից ընթացքում հոգևոր առաջնորդները կարևորեցին երկու կրոնների ներկայացուցիչների երկխոսությունը՝ նշելով, որ այն պետք է ուղղված լինի խաղաղության ամրապնդմանը և տարբեր դավանանքներ ունեցող ժողովուրդների բարեկամության խորացմանը:

Իր խոսքում մանրամասնելով Եգիպտոս այցելության հիմնական նպատակները, նաև շեշտելով Ալ-Ալիաթ փառու կարևորությունը, Գարեգին Ա Վեհափառ Հայրապետն առանձնակի նշեց.

«Այս առաջին այցելությունն է եգիպտոս՝ որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց: Ես արգեն երեք տարի է, ինչ ապրում եմ Հայաստանում: Ես պատասխանատու եմ ոչ միայն Հայաստանի մեջ ապրող երեք ու կես միլիոն Հայերի, այլև ամբողջ աշխարհում սփռված Հայերի Հոգևոր վիճակի Համար: Ես միշտ եղել եմ իսլամական և քրիստոնեական երկխոսությանը մասնակից մի անձ: Սիրիայի, Լիբանանի մեջ և նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում սկսեցինք իսլամ եղբայրների հետ երկխոսությունը: Կարծում եմ, սա ժողովուրդների Համար գործակցելու կարևոր եղանակն է:

Ես պետք է ավելացնեմ նաև, որ Հայ ժողովուրդը, յոթերորդ դարից սկսած, միշտ առնչվել է իսլամական կրոնքին հետևող երկրների հետ: Մենք չենք նմանվում արևմտյան աշխարհի այն քրիստոնյաներին, ովքեր, խաչակիրներից հետո, նոր սկսեցին ճանաչել իսլամներին: Մենք տեղացի քրիստոնյաներ ենք, և մեր իսլամ եղբայրների հետ մեր կյանքը բաժանող:

Երկխոսությունը գաղափարների փոխանակում չէ միայն, այլ կյանք, մասնակցություն, իրար հետ ապրելու՝ արվեստ: Մենք գաղութատիրական Հոգեբանության տեր ժողովուրդ չենք եղել, այլ՝ եղբայրությանը ապրող ժողովուրդ: Դրա Համար երբ մենք ունեցանք սոսկալի 1915-ը, մեկ և կես միլիոն Հայեր զոհ գնացին, բայց արաբական, իսլամական երկրների մեջ մենք վերստին գտանք մեր կյանքը: Դրա Համար մենք այստեղ երկար դարերի պատմություն ենք ունեցել: Ունեցել ենք նաև պետական շրջանակներում գործող Հայեր: Հայության և Եգիպտոսի իսլամ ժողովրդի միջև Հարաբերությունները նոր չեն, այլ դարերի արձատներ ունեն: Այժմ Հայաստանը ազատ և անկախ Հանրապետություն է: Այժմ մի նոր կյանք ենք ապրում, որը մեր Հավատքի վերանորոգման շրջանն է: Դրա Համար Հոգեորականների կողքին ունենք նաև աշխարհական դասի ներկայացուցիչներ: Մեր Եկեղեցին և մեր Գետությունը միշտ միախառնված են եղել իրար հետ: Մեզ հետ է նաև

Հայաստանի Հանրապետության կրոնական գործերի նախագահը: Ես մաղթում եմ, որ քրիստոնյա և իսլամ եղբայրների մեջ տիրի Աստծո Հոգին, որպեսզի կարողանանք երկխոսության և բարի կամեցողության միջոցով բարօրության հասնել ընդհանուր մարդկության համար»:

Շնորհակալություն հայտնելով Հայոց Հայրապետի շնորհաբեր այս այցելության համար՝ Շելխ Սայետ Թանթաուիին ասաց.

«Շնորհակալություն եմ Հայտնում Հայոց Կաթողիկոսին, այս այցելության համար: Շնորհակալություններս նաև պարոն դեսպանին այս և նախկին այցելության համար: Մենք գիտենք, որ բոլոր կրոնները Աստված է պարգևել մարդկանց երջանկության համար՝ սերմանելու առաքինությունը մարդկանց սրտերում և պաշտելու միակ Աստծուն: Սուրբ Ազգաբը ողջունում է բոլոր նրանց, ովքեր օժանդակում են խաղաղությանը, անվտանգությանը և բարեգործություններ են անում: Դրա համար մենք ուրախ ենք՝ լսելով ձեզանից վերոհիշյալ խոսքերը: Եվ մենք, որպես Ազգարի ներկայացուցիչներ, ողջունում ենք բոլոր նրանց, ովքեր խաղաղություն և սեր են սփռում ժողովուրդների մեջ: Մենք, որպես Հոգևորականներ, դատապարտում ենք բոլոր բացասական փոփոխությունները: Մենք, որպես կրոնականներ, դեմ ենք յուրաքանչյուր վատ արարքի: Եվս մեկ անգամ ողջունում ենք բոլորիդ, և Սուրբ Ազգաբը երջանիկ է այս այցելությամբ»:

Վերջում, ի հիշատակ բարեկամական հանդիպման, Գարեգին Ա Կաթողիկոսը Ալ-Ալիարի հոգևոր առաջնորդին՝ Շելխ Սայետ Թանթաուիին նվիրեց հայ վարպետի հմուտ ձեռքի արգասիք, օբսիդիան կոչվող հայկական քարից պատրաստված մի ժամացույց:

«ԱՐՎԵՍՏԻ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԵԼՈՒՅԹԸ՝

Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Երեկոյան ժամը 21.00-ին, ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Կահիրեի Ամերիկյան համալսարանի «EWART MEMORIAL HALL» սրահում, Եգիպտոսում Հայաստանի Հանրապետության դեսպանության, Կահիրեի Ազգային իշխանությունների և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ԲԸՄ) վարչության նախաձեռնությամբ, տրվեց համերգ՝ Կահիրեում հյուրախաղերով գտնվող Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչների մասնակցությամբ՝ Եգիպտոսում Հայաստանի մշակույթի օրերի շրջանակում:

Համերգի ընթացքում հնչեցին հայկական ժողովրդական երգեր, դասական ստեղծագործություններ: Առանձնակի տպավորիչ էին և աչդեցիկ հայկական պարերգերի կատարումները:

Տոնական համերգի վերջում, դիմելով բոլոր մասնակիցներին ու ներկաներին, Հայոց Հայրապետը սրտի լաթաքույց հուշումով ասաց.

«Այս երեկոն անջնջելի Հեռք է թողնելու իմ Հոգեկան ապրումների և Հիշողությանց վրա, որովհետև ես ինձ պատված զգացի այսպիսի գեղարվեստական, մշակութային ծրագրից, որի միջից Հայ ժողովրդի մշակույթի Հոսքն էր, որ լցվեց մեր Հոգիներում: Եվ սրանից ավելի մեծ պատիվ ես չեմ կարող գտնել որեւէ այլ տեսակի արտահայտությանց մեջ: Առաջին Հերթին սրտի պարտք եմ զգում իմ խորը շնորհակալությունները և բարձրագույն աստիճանի գնահատանքը Հայտնել մեր Հայաստանի

քարի մեջ իր ներքին մարդն է դնում, այն ժամանակ է, որ իր գործը արվեստի նմուշ է դառնում, և ինքը պատիվ կունենա արվեստագետ կոչվելու:

Դուք տեսաք մեր Հայրենիքի արվեստագետներին, արվեստագետներ, որոնք անասելի դժվարություններով արվեստ են ստեղծում: Եթե այն մեռնի մեր մեջ, ապա ի՞նչ կմնա: Դրա համար այսօր ես եկել եմ ձեզ ասելու, որ դուք այդ մշակույթի գիտակցությունը, արժեքը չկորցնեք օտար, ամայի ճանապարհներին: Շատ ազդեցություններ կգան, և դրանց ազդեցությունը բնականոն է: Բայց պետք է իմանանք ընտրել: Ընտրելու կարողությունն է մեր արժանիքը: Ամեն տեսակի ազդեցություններին ենթարկվելը ազգային առողջ դիրքորոշում չէ:

Այսօր, երբ լսում էի մեր ազգային արվեստագետներին, մի պահ սիրտս վրդովվեց, երբ անդրադարձա, որ թե՛ Հայաստանում և թե՛ արտասահմանում մշակույթի հասկացողության մակերեսայնացումի փորձություն կա: Այսօր մի քանի գործիքներով մարդիկ երաժշտություն են խաղում: Ի՞նչ երաժշտություն: Մի՞թե կարող է երաժշտությունը աններգաչանակ լինել, ինչպես նրանք են կարծում: Այսօր Կոմիտասը փոխարինվել է Ջազ և կամ նմանատիպ երաժշտությամբ, որը խամբեցնում է մեր երիտասարդության հոգին: Այսօր ես ողջունում եմ այս արվեստագետներին՝ ձեր ճակատները համբուրելով:

Այսօր շատ տեղերում եթե դասախոսություն և կամ երաժշտական երեկույթ է լինում, մարդիկ չեն գնում, իսկ եթե ճաշկերույթ է լինում, ուր երգում ու պարում են, մարդիկ հաճույքով գնում են: Գնում են այնտեղ, ուր Աստուծո՞ւ դիտի, երաժշտություն է, թե՛ ոչ: Այսօր չորս-հինգ նոտա կողք-կողքի դնողը իրեն երաժիշտ է համարում: Առանց երաժշտական դպրոց գնալու, երաժշտական կրթություն ստանալու, իրենց երաժիշտ են համարում: Սկսել ենք աղքատանալ: Այսօր ես ձեզ կոչ եմ ուղղում: Մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի նյութը չտիրապետի մեզ վրա: Եթե երբևէ նյութը տիրապետի մեզ վրա, մենք կմահանանք: Եթե հոգին տիրապետի նյութի վրա, նյութը կհոգիանա: Իմ վերջին խոսքը կոչ է սիրելի երիտասարդներին. Ձո՛հ մի գնացեք ազդեցություններին, որոնք մարդկային տեսակետից արժեք ոչնչացնելու, հավի նման կգան ու տերեւի նման կգնան: Սակայն Բախերը, Մոցարտները, Շուբերտները, Կոմիտասները, Խաչատրյանները և նրանք, ովքեր երաժշտությունը հոգու ուժի վերածեցին, նրանք մահվան սահմանագծից այն կողմ են գտնվում և մահ չեն ճաշակի: Նյութի այս տիրապետող շրջանին նյութին զոհ չգնանք, որպեսզի կարողանանք Հայաստանը հոգեկան ճառագայթման կենտրոնի վերածել: Այսու, իմ բարձրագույն գնահատականը մեր մշակութային նախարարությանը և մեր արվեստագետներին, ովքեր այս օրը անմոռանալի օրվա վերածեցին և մեզ Հարստացրին: Այս արվեստագետների դասն այն է, որ երբ մարդիկ մշակութային բարձր արտահայտությունների մակարդակի վրա մնան, ո՛չ աշխարհագրությունը, ո՛չ աշխարհագրական սահմանները և ո՛չ էլ ժամանակը կարող են իրենց հաղթել: Հետևաբար, ուղում եմ, որ մենք գիտնանք թե՛ մեր հոգեկան միությունը, թե՛ այդ միության գործությունը և թե՛ այդ գործության մեր արժանի բարձրությունը»:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅՈՒՄ

Հունվարի 16-ի վաղ առավոտյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Ա Սմենայն Հայոց Կաթողիկոսն իրեն ուղեկցող շքախմբի հետ մեկնեց պատմական

Ալեքսանդրիա՝ հանդիպելու տեղի իսկ համայնքի հետ և փոխանցելու իր հայրապետական պատգամը:

Այստեղ Նորին Սրբությունը դիմավորվեց մեծ շուքով և ջերմությամբ և առաջնորդվեց դեպի Սուրբ Պողոս-Պետրոս հայկական եկեղեցի: Մուտքի մոտ Հայոց Հայրապետին դիմավորեցին Ալեքսանդրիայի հոգևոր հովիվ Տ. Թադևոս վրդ-Չիրեկյանցը, քաղաքական ժողովի ատենապետ Պ. Փալանճյանը, մեծաթիվ ազգայիններ, վեհափառ Հայրապետին տեսնելու և լսելու նպատակով հավատավոր հայորդիներ:

Գարեգին Ա Կաթողիկոսն ամփոփանալ ներքո, թափորի ուղեկցությամբ, «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Պողոս-Պետրոս եկեղեցի (կառուցված՝ 1884 թվականին) և առաջնորդվեց դեպի Ավագ հորան:

Կանոնական աղոթքից հետո Նորին Սրբությանը բարիգալությամբ բերվ խոսքեր ասաց եգիպտոսի հայոց լուսնի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչիյանը:

Ապա Ալեքսանդրիայի հայությանն իր պատգամը հղեց վեհափառ Հայրապետը՝ շեշտելով ազգային պատկանելիության գիտակցության կարևորությունը, Հայ եկեղեցուն փառվելու անհարժեշտությունը և եգիպտահայ գաղութի անցյալի հարուստ պատմությունն այսօր կենդանի կյանքի վերածելու հրամայականը:

«Թեմակալ առաջնորդ եգիպտոսի Հայոց Թեմի Զավեն Սրբազան, Հարգարժան Թեմական իշխանության ներկայացուցիչներ, Հոգաբարձության, եկեղեցական վարչության անդամներ, Թանկազին, ամենասիրելի Հավատացյալ ժողովուրդ, անդամներ Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու:

Ես առաջին Հերթին սրտի պարտք եմ զգում Հոգուս մեջ ծուևկի գալու այս խորանի առջև և փառք ու գոհություն ընծայել Ամենակալ Աստծուն, որ այս օրերի տարիներից ի վեր իր քրիստոնեական Հավատքը Հայ ժողովրդի ողբազան ավանդության միջից կենդանի և կենդանաբար պահեց Աղեքսանդրիո մեր ժողովրդի կյանքի մեջ: Փառք Աստծուն, որ այս եկեղեցին տասնամյակներե ի վեր մնաց առատաճու աղբյուր Աստծու շնորհների, Աստծու խոսքի և մեր ինքնության արժանիքների արտահայտիչը, Օթախը, Աստծու խոսքի և մեր ինքնության արժանիքների արտահայտիչը, Օթախը, ներշնչարանը: Նաև փառք եմ տալիս Աստծուն նրանց Համար, ովքեր այստեղ ապրեցին, այստեղ գործեցին, սակայն Հիմա չկան, բայց և երկրից Հրճվում են իրենց երկնային խաղաղության կայքերից և դիտում են ձեզ՝ իրենց զավակներին, Թոռներին և ծոռներին, ովքեր Հավատարմորեն շարունակում են այն սուրբ գործը, որին լծված էին իրենք: Աստված երջանկունության երկնային երանական անօպառելի և աննկարագրելի բերկրանքի մեջ պահի բարեբարների Հոգին և Հոգին այն Հոգևորականների, որոնք իբրև քահանաներ, վարդապետներ և իբրև եպիսկոպոսներ ծառայեցին, և բոլոր այն պարզ մարդկանց, Հոգաբարձության անդամներին և Հավատացյալներին, որոնք այս եկեղեցին իրենց կյանքի Հետ միախառնեցին և այժմ երկնքից Հրճվում են և տեսնում, որ եկեղեցին Հուշարձան է, այլ շարունակփող աղբյուր Աստուծո Հոգու ներթափանցմամբ մեր ժողովրդի ապրող և ապրելիք սերունդների կյանքում: Մերունդները շղթայի օղակի պես կուգան, կանգնեն, Թե՛ն է օղակները պահում: Այդ Թե՛ը Հավատքն է, սերը, Հույսը: Եթե այդ առաքելություններով կծկված Թե՛ը կտրվի, ապա օղակները կարծեգրվեն, օղակները մենք՝ անՀատներս ենք, որ կկորչենք: Մենք արժեք կունենանք, երբ թունվենք Հավատք, Հույս, սեր կոչված երեք Թե՛երից:

Թուրքաբանչյուր Հոգևորական և կամ աշխարհական, պետական պատասխանատու անձ, որ կոչված է ժողովրդի ծառայության, չի կարող այդ ժողովրդին ծառայել արդյունավորապես, ճշմարտորեն, պտղաբեր ձևով, եթե չճանաչի նրան: Պետք է այդ ժողովրդի ապրումների թրթռումը, շնորհիվ իր մեջ: Ոչ թե ճանաչել թվով, լսել՝ Ալեքսանդրիայում այսքան մարդ կա, այդ չէ ծանոթությունը, այլ ժողովրդի հետ հաղորդակցվելը. զգալ նրա զարկերակը սեփական զարկերակի մեջ: Սա Ավետարանից է գալիս, այլ ոչ թե մեր իմաստությունից և կամ մեր արժանիքներից:

Աստված ինքը մարդուն ծառայելու համար մարդացավ: Այս օրերին մենք նրա ծնունդն ենք տոնում: Աստված այցելեց մարդուն իր Միածին Որդու միջոցով. «Յիսուս շրջէր ընդ դիւզս և ընդ քաղաքս», - ինչպես ասում է Ավետարանը (ՂՈՒԿ. ԺԳ 22): Հիսուս ծառայեց մարդկանց և ոչ թե զբաղմունքից հրահանգներ արձակեց: Մտավ ժողովրդի մեջ, նրա տաղանդները, ցավները, ձգտումները, ուրախությունները կիսեց: Եթե Աստված դնաց դեպի ժողովուրդը, ապա մենք ո՞վ ենք, տկարներս, որ չգնանք դեպի նա, նրան չհասցնենք Աստծո խոսքը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգաժուկությունը, այլապես ո՞րն է մեր գոյության իմաստը իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս: Դուք եք մասնակի ամենայն Հայոց: Մենք մեր ծառան ենք, ծառաների ծառան ենք: Տե՛ր կամ իշխան չենք: Եթե մեզ տեր կամ իշխան անվանեք, ապա միայն այն դեպքում, եթե մեր ծառայությունը կատարենք լիարժեքորեն: Ինչպես Հիսուս է ասում, «Ով որ ձեզանից ուզում է լինել առաջինը, թող լինի վերջինը, և ով որ ուզում է լինել իշխողը, թող լինի սպասավոր» (ՄԱՏԹ. Ի 26): Սպասավորության, ծառայության միջից է իմաստավորվում իշխանությունը, այլ ոչ թե անուկի, դիրքի, աթոռի, հանգամանքի:

Այսօր ես եկել եմ՝ ամենախոնարհ զգացումներով առ Աստված և իմ ժողովրդին ծառայելու մեջ Հանդիպելու, հաղորդվելու Ալեքսանդրիայում ապրող Հայորդիների հետ: Նախ խոսքս ուղղում եմ նրանց, ում մաղբեր արդեն ճերմակել են: Ապրե՛ք: Դուք տարիներ ի վեր մեր շարունակական, անբեկանելի մասնակցությամբ դարձաք ուսուցիչ միջին սերունդի, երկրորդ սերունդի: Ես ուրախ եմ, որ նրանց թիվը այստեղ շատ է: Նրանք, ովքեր ունեն և՛ իմաստություն, և՛ քաջություն, մասնավորապես պատասխանատվություն՝ ստանձնելու իրենց աշխարհը հարստացնելու ազգային-եկեղեցական, կրթական, մշակութային, ընկերային պարտավորություն մեր ժողովրդի կյանքում: Ես հավատում եմ, որ եթե կամավոր ծառայության այդ բաժինը դուրս հանենք մեր ազգի կյանքից, մենք հոգեկանությունից պարզված ազգ կդառնանք: Այդ կամավոր ծառայությունը, իբրև սիրո արտահայտություն, որ կամք է տալիս, եռանդ, նկարագիր, իմաստ և արժեք մեր կյանքին: Ապրե՛ք դուք, այսօրվա դժոխք զավակներդ հոգաբարձությունների և կամ ուրիշ կազմակերպությունների անդամներդ, որ պատրաստակամորեն, Հոժարորեն Հանձն եք առնում ծառայել: Ես մարդկանց երկու դասակարգով եմ ըմբռնում. նրանք, ովքեր պարտականության գիտակցություն ունեն, և նրանք, ովքեր դրանից դուրս են: Պատիվ առաջիններին և ամսոս երկրորդ դասակարգի մարդկանց: Մեծ է նա, ով պատասխանատվություն է ստանձնում: Այսինքն՝ իր անձից դուրս է գալիս, ով ուզում է լինի՝ Կաթողիկոս, նախագահ կամ պարզ աշխատավոր: Ով իր անձի համար է ապրում, ապա իր անձի բանտը և դերեզման է պատրաստում: Ի՞նչ արժեք կունենա իմ տաղանդը, եթե ես այդ տաղանդը պատասխանատվության զգացումով է սպաս չդնեմ իմ ժողովրդի համար: Ո՞ւմ է պետք որևէ անհատի հմտությունը և գիտությունը, եթե նա այդ ի սպաս չի դնում իր ժողովրդի զոհասեղանին:

Այսօր ես գալիս եմ այդ նույն երկրից, նույն ժողովրդի մոտից, սակայն կերպարանափոխված, պայծառակերպված: Մենք այլևս այն չենք, ինչ որ էինք տասը տարիներ առաջ: Այս տարի, Հաջորդ ամսին, փետրվարին, մենք տոնելու ենք դարաբաղյան շարժման տասնամյակը: Ինչպիսի՞ փոփոխություն մտցրեց մեր ժողովրդի Հոգեբանություն մեջ, երբ 1991 թվականին ազատություն և անկախության ապրումները իր մեջ կորցրած ժողովրդի զավակները Հռչակեցին Հայոց նոր Հանրապետությունը, ազատ և անկախ Հանրապետությունը: Այն ժամանակ փոխվեց Հայոց պատմությունը, և այդ փոփոխությունը եթե չենք զգում, նշանակում է մեր Հայ լինելու մեջ ամբողջական չենք: Ես ուրիշ անգամներ ասել եմ, նույնիսկ Ամենայն Հայոց Կաթողիկոս լինելուց առաջ, որ ես արդի Հայոց պատմությունը երկու շրջանի եմ բաժանում. առաջին՝ նախադարաբաղյան շրջան, և երկրորդ՝ հետդարաբաղյան շրջան: Այս փոփոխությունը Հիմնականորեն ենթադրում է ոչ թե սխառմի փոփոխություն, այլ՝ մարդկանց: Եթե ես և դուք պետք է մնանք այն, ինչ որ էինք 1988 թվականից առաջ, ապա ինչո՞ւ կայացավ անկախությունը:

Այս պահին, այստեղ՝ Ալեքսանդրիայում, Կահիրեի և կամ Սփյուռքի ուրիշ կենտրոններում քանի՜-քանի՜ Հայեր կան թաղված, որոնք գնացին ազատության և անկախության տեսիլքը սրտներին: Նրանք մա՜հ չտեսան, նրանք գերեզման չունեն: Ազատությունն ու անկախությունը գերեզման չունեն: Երբեմն կորչում են օտարների Հարվածների տակ, բայց չեն վերացվում իսպառ ժողովրդի Հոգում: Եվ դուք եք այդ ժողովուրդը: Այո՛, մենք ապրում ենք մի այնպիսի շրջան, որ մեղրի և կարագի շրջան չէ: Նեղությունների միջից ենք անցնում: Փոփոխությունը դուրսին բան չէ: Առաջ ուրիշների ասածներն էինք կատարում, իսկ այժմ մենք ենք որոշողը մեր անելիքների, և այդ որոշումը դժվար է: Ես գիտեմ, որ երբեմն որոշում կայացնելու եզրին կանգնող անհատի Համար կյանքը ավելի դժվար է, քան այդ գործադրողի Համար, քանզի պատասխանատվություն է առաջանում, սխալի դեպքում ուրիշներին չմեղադրել: Եվ պատասխանատուները շատ ավելի ծանր են զգում բռնը:

Այսօր Հայաստանը ամբողջ Հայ ժողովրդի պատասխանատվությունն է: Ինչպես Կահիրեում ասացի, այստեղ նույնպես կրկնում եմ, այսօր 30.000 քառ. կմ Հողը մեր սեփականն է: Երբ դու մի տան մեջ ես ապրում և վարձակալի Հոգեբանությամբ ես ապրում, այդ տան նկատմամբ ինչպե՞ս կվարվես. վարձակալի՞ պես և ոչ երբեք սեփականատերի: Մենք մեր երկրի մեջ մեր որոշումների տերը չէինք: Թե ինչպես պետք է օգտագործեինք մեր Հողը, Հյուսիսից էին ասում և կամ այլ օտար իշխանություններ, որոնց իշխանության ներքո էինք: Իսկ այժմ մենք ենք որոշում, թե ինչպես պետք է ապրենք: Դրա Համար Հայաստանը ամբողջ Հայության պատասխանատվությունն է, եթե մենք մեզ Հայ զգանք, թե ինքնության թուղթով Հայաստանցի կամ եգիպտացի, կամ լիբանանցի կամ Սիրիայի Հպատակ ենք, դա չէ կարևորը: Այդ թուղթն է, Հոգով ո՞ւր ենք: Ես ծնված օրվանից առանց որևէ թղթի Հայաստանի քաղաքացի եմ: Չեղանից յուրաքանչյուրը ևս պետք է իրեն նկատի Հայաստանի քաղաքացի:

Մեր Հայաստանից եթե պատվիրակություն դնար միջազգային ժողովի, ապա սովետական պատվիրակության մեջ մի փոքրիկ տեղ պետք է զբաղեցնեիր, առանց անունի: Իսկ այսօր մենք ենք գնում, մենք՝ մասնակցում որպես Հայաստանի պատվիրակություն: Ի՞նչ գեղեցիկ է այս խոսքը. դու

Իմ այս այցելությունից հետո վա՛յ ձեզ, եթե չգաք Հայաստան, էջմիածին, չտեսնեք ձեր երկիրը, ձեր քրտինքը չխառնեք այդ հողին: Իսկ այժմ օրհնում եմ ձեզ և մաղթում, որ նորոգության շունչը մտնի Ալեքսանդրիայի մեր գաղութի մեջ, և թող ծաղկի այս եկեղեցին Աստուծո փառքի և մեր ազգի պատվի համար հավիտյանս հավիտենից. ամեն»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ «ՊՈՂՈՍՅԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻ ԵՎ ՌԻՍՈՒՑԶԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԵՏ

Հավարտ եկեղեցում կատարված հանդիսավոր արարողության, Նորին Սուրբ Օծությունն ամպիոպանու ներքո առաջնորդվեց դեպի Ալեքսանդրիայի հայոց առաջնորդարան, ուր հանդիպեց տեղի «Պողոսյան» ազգային վարժարանի ուսուցչական կազմին և սաներին և իր հայրական պատգամը տվեց նրանց:

Ուսուցչական կազմի և աշակերտության անունից բարի գալուստ մաղթելով շատ սիրելի Վեհափառ Հորը, «Պողոսյան» վարժարանի տնօրինուհի Շուշան Գանիսյանն իր խոսքում ասաց.

«Շատ սիրելի Վեհափառ Տէր.

Փառք կուտանք Աստուծոյ, որ իր շնորհքով ձեզ արժանի ըրաւ այսօր ընդունել Ձեր Հայրական այցելութիւնը:

Սուրբ էջմիածնի գահակալ Ամենայն Հայոց Հայրապետ, Ձեր այս այցելութեամբ մենք գոտեպնդուած կը զգանք, ինչպէս Սփիւռքի միւս գաղութներու Ձեր գաւակները: Առաջ տանելու համար մեզի վստահուած ազգապահպանման նուիրական գործը, մենք միշտ կարիք ունենք Ձեր օրհնութիւններուն:

Վեհափառ Հայրապետ, արտօնեցէք, որ համառօտ կերպով նկարագրեմ ձեր Պօղոսեան Ազգային վարժարանը այժմու պայմաններուն տակ:

Մեր դպրոցը ունի մանկապարտեզէն մինչեւ բարձրագոյն նախակրթարանի աշակերտներ, որոնք այստեղ կուսանեն երկրորդական բարձրագոյն ուսում, որմէ ետք կընդունուին Պետական Համալսարանները: Մեր աշակերտները եգիպտոսի կրթական նախարարութեան ծրագրին համաձայն պետական քննութիւններուն պատրաստուելէն բացի, կը ստանան կատարեալ Հայեցի կրթութիւն: Կրօնքը և Հայ ազգային գիտակցութիւնը իրենց մէջ վառ պահելու համար ոչ մէկ ջանք չի խնայուիր:

Հակառակ որ մեր աշակերտները շատ ծանրաբեռնուած են զոյգ ուսումնական աշխատանքով, գրեթէ ամէն տարի անոնք կ'արժանանան եգիպտոսի կրթական նախարարութեան գնահատանքին և կը ստանան ուսումնական մրցանակներ: Մեր աշակերտները թէև թիւով քիչ, բայց որակով բարձր են: Վստահ եմ, որ Ձերդ Վեհափառութիւնը Հայրական անխառն ուրախութեամբ կը տեղեկանայ իրենց յաջողութիւններուն այս բարեբաւօրիկ լուրերուն:

Կը խնդրենք որ Ձերդ Սրբութեան օրհնութիւնները միշտ իրենց վրայ ըլլան և անոնք մեծնան ձեր դարաւոր Հայրենիքին որպէս արժանի ծառանքները:

Ամենակալ Տէր Աստուծմէ կը խնդրենք, որ Ձերդ Սրբութեան շնորհէ առողջութիւն և արեւշատութիւն, որպէսզի մեր գաղութը և այս կրթական հաստատութիւնը եւ միշտ վայելէ Ձեր հոգածութիւնն ու հովանաւորութիւնը:

Պողոսեան Ազգային վարժարանի և Մելգոնեան մանկապարտեզի ուսուցչական կազմին և սան-սանուհիներուն կողմէ կուգամ խոնարհաբար մեր երախտագիտութիւնը յայտնել Զերգ Վեհափառութեան, որ Հաճեցաք մեզ այցելել և Զեր օրհնութիւնները մեզի բաշխել»:

Իր պատգամ-հորդորում Ամենայն Հայոց Հայրապետը ջերմ սիրով և ուրախությամբ նշեց այն մեծ գործը, որ կատարում են վարժարանի ուսուցիչները Հայրենիքից հարյուրավոր կիլոմետրեր հեռու՝ այս կերպ պահպանելով Հայոց երկրի անաղարտ նկարագիրը, մայրենի լեզվի ջիւղ ու մաքուր հնչեղությունը, նախնայաց հավատքի հավատարմությունը և հայրենի հողի նկատմամբ մշտանորոգ սերը:

Իսկ մանուկներին կամեցավ, որ լինեն արժանի հետնորդները Սուրբ Մեսրոպ Մաշտոցի, Մամիկոնյանների հայրենասեր գերդաստանի քաջարի ժառանգորդները և իր շատ սիրելի թոռնիկները: Սակայն երբ մեծանան, հասակ առնեն, երբեք չմոռանան Հայաստան աշխարհը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և օրերից մի օր, թեկուզ ուխտավորաբար, անպայման այցի գան հայրերի երկիրը, Մեսրոպ Մաշտոցի շիրմին:

ԱԶԱՀԱՄԲՈՒՅՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ ԵՎ

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԿԻՅ՝

ԳԵՐԵՉՄԱՆԱՏԱՆԸ ՀԱՆԳՉՈՂ ՀԱՅԱԶԳԻ

ՆԵՄԱՆԱՍՎՈՐ ՉԱՎԱԿՆԵՐԻ ՇԻՐԻՄՆԵՐԻՆ

Բիշ ուշ, Պողոսեան Ազգային վարժարանի ուսուցիչների և սաների հետ ունեցած հանդիպումից անմիջապես հետո, Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցում ի մի եկած ողջ հավատավոր հայությունը, երկյուղիվ և ակնածանք մոտենալով Վեհափառ Հայրապետին, արժանացավ աջահամբույրի ու հայրապետական օրհնության:

Այնուհետև թափորի առաջնորդությամբ Նորին Սուրբ Օծությունը շրջեց եկեղեցուն կից գերեզմանատանը, «Հոգվոց» հանգստյան աղոթք արեց ազգիս բարերարներ Պողոս Նուբար Փաշայի և մյուս նշանավոր հայորդիների շիրմների՝ հայցելով Ամենակարող Տիրոջ ողորմածությունը նրանց հոգիների խաղաղության համար:

ՊԱԵՏՈՆԱԿԱՆ ՃԱԵ «ՊԱՂԵՍՏԻՆ»

(PALESTINE) ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Հետկեսօրին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելության Ալեքսանդրիա, տեղի «Պաղեստին» (Palestine) հյուրանոցում տրվեց պաշտոնական ճաշ, որն ուներ նաև գեղարվեստական գեղեցիկ հայտագիր: Ժաշկերութին ներկա էին քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, պետական բարձրաստիճան շարքեր, մեծաթիվ ազգայիններ:

Վերջում ներկաներին իր հայրապետական պատգամը տվեց Ամենայն Հայոց Հայրապետը, որն ընդունվեց բացառիկ հուզմունքով ու ջերմությամբ:

Մանրամասնելով հայ ժողովրդի ներկա կացությունը, վերապարթոնքն ու օրավոր գրանցվող նվաճումները, Նորին Սուրբ Օծությունն ասաց.

«Սիրելի առաջնորդ սրբազան, սիրելի Հոգևոր եղբայրներ և շատ սիրելի սեղանակիցներ, հայրենակիցներ, արյունակիցներ, Հավատակիցներ, մեկ խոսքով՝ հարազատ եղբայրներ և քույրեր.

Ես նախ կուզեի իմ խորին շնորհակալությունները հայտնել այն ջերմ, հայափայել ընդունելության համար, որ ցույց տվեցիք այսօր, Ալեքսանդրիա հռչակավոր, պատմական, մշակութային կենտրոն քաղաքի մեջ: Ձեր հարգանքն այնքան մեծ է, այնքան խորունկ ու անկեղծ, որ իմ տկար անձը չի կարող այդքանն իր մեջ պարսիակել: Հետևաբար, ես ձեր սերը, հարգանքը և այսպիսի ակնածափայել վերաբերմունքը հասցեագրում եմ մեր Սուրբ Եկեղեցուն, որից ծնվեցի և որի շնորհիվ մեծացա և հասա Ամենայն Հայոց կաթողիկոսության՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի: Նա է մեր տներն ու ներշնչման աղբյուրը, և եթե երբեք այդ եկեղեցին չլիներ, ես երբեք չէի կարող այդ ծառայությունը մատուցել իմ ժողովրդին, ինչպես այսօր և ողջ 45 տարիների եկեղեցական կյանքիս մեջ ջանացել եմ ընծայել իմ ժողովրդին: Ինչ որ կամ և ինչ որ ունեմ, պարտական եմ իմ Եկեղեցուն և, հետևաբար, շատ քիչ եմ արել, այդպես եմ զգում: Այսօր սեղանակից ենք, ի սրտե ենք խոսում, պաշտոնական ճառ կամ Հոետորական քարոզ չէ, որ տալիս եմ ձեզ, այլ՝ մտերմիկ զրույց է այս: Եվ ասեմ, որ վատ սովորությունս այն է, որ իմ առողջությանն էլ է վնասում, այն է, որ ես միշտ այս բաժակ կոչվածի դատարկ կողմին ավելի եմ նայում, քան՝ լեցուն կողմին: Արածս ինձ համար այնքան արժեք չունի, ինչքան ընելիքս: Եվ կյանքը դիտելու այս եղանակը կա. նայում ես՝ ես այս արեցի, ես այն արեցի: Այն օրը, որ դոհանաս, այդ օրը մեռած ես: Այն օրը, որ արածդ բավարար չես նկատել և ավելիին ես ձգտում, այն պահին է, որ արժանի ես Աստուծո և ազգի զավակ լինելուն:

Սրբազանը շատ ճիշտ կերպով ասաց, որ ես ցանկանալով ցանկացա անպայման Ալեքսանդրիա դալ, որովհետև Ալեքսանդրիան աշխարհի առաջին քաղաքն է, ուր ես իմ առաջին ճամփորդության առաջին էջքս եմ կատարել: «Ադամեմնոն» նավից երբ 1957 թվականի սեպտեմբերին, 40 տարի առաջ, իբրև 25-ամյա երիտասարդ վարդապետ, գնում էի Օբսֆորդ՝ Անգլիա, ուսման էի գնում, այստեղ նավը կանգնեց և իշա վար ու գնացի մեր եկեղեցին: Երբ տեսա, շատ տարվեցի նրա ոճով: Այս առաջին տպավորությունս երբեք չեմ կորցրել և այսօր եկա ու ոչ միայն եկեղեցին տեսա, այլ հավատքի եկեղեցին տեսա ձեր հավատքի մեջ: Եվ այդ եկեղեցին է բուն Եկեղեցին: Ես հաճախ մտածում եմ, թե քանի հազար եկեղեցիներ շինվեցին ու քանդվեցին, բայց մեկ եկեղեցի չքանդվեց. դա մեր հոգիների մեջ ապրող եկեղեցին է: Մեր հոգևոր կյանքն ու մասնակցությունն է, որ եկեղեցին Եկեղեցի է պահում:

Աշխարհը դեպի կրոնական վերադարձոնք է գնում՝ բոլոր կրոնների մեջ: Եվ սրա պատճառն այն է, որ մարդիկ արդեն հոգնել են այս կյանքի չափազանց աշխարհայնությունից: Ի՞նչ է մեր տարբերությունը ոչ մարդ էականներից, որոնք նույնպես ծնվում են, ուսում, մեծանում և մեռնում: Հիսուս ասում է. «Ես եկա, որպեսզի կյանք ունենաք և առավել կյանք» (ՀՈՎ.Է. Ժ 10): Ի՞նչ է, մենք կյանք չունենի՞նք: Ապրում էինք: Այդ նշանակում է, որ Նա եկավ, որպեսզի մեր բանական կյանքում նյութականը ծանրակշիռ դեր չունենա: Այս դարը սկսվեց արյունով, ավերակով ու կոտորածով: Կորցրինք կյանքեր, հող, ունեցվածք: Բայց հետո մենք ունեցանք պայծառ առավոտ՝ 1918 թվականին, երբ Հայոց առաջին հանրապետությունը վերահռչակվեց, և մենք պատերազմից հետո, ինչպես այնօրվա Կաթողիկոսը կասեր, «Լուսի շող շողաց Արարատի փեշերից, բայց երկար չտևեց այն»: Երկու տարվա կյանք ունեցավ մեր առաջին հանրապետությունը՝ Մայիս 28-ով հռչակված, և ապա խամրեց:

Համաշխարհային երկրորդ պատերազմը իր հետ Հազարավոր զոհեր տարավ մեր ազգից: Հունվարի 4-ին, երբ Ժակ Շիրակի հետ առանձին Հանդիպում էի ունենում, ասացի, որ մենք գաղթական ժողովուրդ չենք հոգով, մեզ գաղթական դարձրին ուրիշները, բայց գաղթական չմնացինք մեր ճակատի քրտինքով, մեր հալալ աշխատանքով, մեր չարքաշությամբ:

Եգիպտոսը առաջնահերթ գաղութներին մեկն էր մշակույթի, մտավորականության տեսակետից սրանից մի քանի տասնամյակներ առաջ: Այսօր Հայաստանը պայծառ Հորիզոնի առջև է, հակառակ բազմաթիվ դժվարությունների: Ես նախընտրում եմ խրճիթ ունենալ, բայց իմ լինի, քան թե պայատում ապրեմ, սակայն վարձակալի կարգավիճակով: Հետևաբար, ես Հաճախ ասում էի, որ մեր ազգի պատմության մեջ այս դարի սկզբին նույնիսկ Հացի պահասից Հայեր մահացան: Ես Դեր-Ջոր բազմաթիվ անգամներ եմ զնացել, որ գտնվում է Եփրատի մոտակայքում: Այս ձեռքերով, սրանից երեք տարիներ առաջ, ավազների տակից ոսկորներ եմ Հանել: Այնտեղ ժողովուրդը սովի պատճառով մահացավ: Այսօր մեզանից շատերը Հացի առատության պատճառով են մահանում:

Մենք այսօր շուրջության պատճառով ավելի ենք վնասում մեզ, քան՝ շահում: Առատությունը ամեն բանի մեջ վատ է, և մենք այսօր կարիք ունենք ինքնազիտակցության: Կյանքը պետք է ապրենք խորհելով: Ճիշտ է, որ դուք այսօր քիչ եք, ճիշտ է, որ եգիպտահայությունը ավելի չքեղ օրեր է տեսել, սակայն ես չեմ հավատում միայն թվի առավելությանը: Մեծ գաղութներ կան, ուր երբեմն գործ չի արվում, և նաև կան փոքր գաղութներ, ուր ամեն տեսակի մեծ գործեր են կատարվում: Մի՛ գանգատվեք, որ թվով քիչ եք, և ոչինչ կարող եք անել, արեք այնքան, որքան կարող եք: Այգեկցին մի պատմություն ունի. մի օր աշխարհի չորս կողմը լուր է տարածվում, որ երկինքը փուլ է գալիս, և ամենքը փախչում են: Մի թույլուն կոնակը գետնին է գնում և ոտքը բարձրացնում վերև: Նրան Հարցնում են, թե ինչո՞ւ չի փախչում, նա պատասխանում է, որ ոտքերով երկինքը պահում է: Ապա շարունակում է, որ եթե ամեն ոք իր կարողության և ուժի չափով պահի իր բաժին երկինքը, ապա այն փուլ չի գա: Հետևաբար, ամեն ոք թող անի այնքան, որքան կարող է: Ինչ որ մենք ունենք, մերը չէ, այլ՝ Աստծունը: Նա է տվել մեզ: Եվ այդ տվածից ինչ լինենք, դա կլինի մերը: Աստված մեզ ժամանակ է տվել, տաղանդ, թե մենք այն ինչպե՞ս ենք օգտագործում, դրա Հաշիվը պետք է տանք, և ոչ թե Իր տվածը Իրեն պետք է վերադարձնենք: Մի օր եթե ներկայանանք Աստծուն, նա մեզ չպետք է Հարցնի, թե մենք ի՞նչ տաղանդ ունենք, այլ պետք է Հարցնի, թե որքանով այն արգասավորեցինք:

Արժեքներն է մեր արժանիքը: Ո՞վ է աշխարհից բան տարել: Մի օր անապատից զնացող մի բեղվին, որ ծարավ էր, նշմարում է, որ հեռվում մի Հոր կա: Սկսում է վազել, Հասնում է ջրհորին և դույլը իջեցնում, որպեսզի ջուր Հանի: Սակայն ջրի փոխարեն արծաթ է դուրս գալիս: «Ով Տեր, արծաթը ինչի՞ս է պետք», ասում է նա և թափում: Երկրորդ անգամ ոսկի է դուրս գալիս, այս անգամ նույնպես թափում է: Կարևորը կյանքում ո՛չ ոսկին է, ո՛չ գիտությունը և ո՛չ էլ ուրիշ առավելություններ: Դրանք այսօր կան, վաղը չկան: Ես այսօր շատ շնորհակալ եմ սրբազանից, որ եկեղեցուց և դպրոցի սրահից Հետո ինձ Հնարավորություն ընձեռեց՝ գնալու և Հարգանք ընծայելու մեր նախորդ մեծերի Հոգու Հանգստյան Համար: Ո՛ւր են, մեզ նման ապրող մարդիկ էին: Գնալիք՝ մարմինը գնաց, սակայն գործը մնաց:

ՄաՀը մերն է, մենք՝ մաՀինը,
Մարդուս գործն է միշտ անմաՀ...

Մի գեղեցիկ խոսք կա, որ իմ կյանքի նշանաբաններից մեկն է եղել: Մուրթ անիծելու փոխարեն մեկ մոմ վառիր: Մուժը անիծելով ի՞նչ կշահես: Մուժից ի՞նչ կպակասի: Իսկ եթե մոմ վառես, գոնե շրջապատդ կլուսավորես: Եթե ամեն մեկը մեկ մոմ վառի, ջահ կլինի և լույս կտա: Իսկ եթե բոլորը մուժը անիծեն, մուժը մուժ կմնա: Այս է մեր կյանքի փոխառփայլությունը:

Այսօր Հայաստանը մեզ դնում է մարտահրավերի առջև: Ի՞նչ պիտի ես անեմ, մեզանից յուրաքանչյուրը պետք է Հարցնի իրեն: Պետք է կարողանանք մեր Հետքը ունենալ այս պատմակերտության գործում: Սուրբ Ստեփանոս Նախավիայի վանքն եմ տեսել Պարսկաստանի և Նախիջևանի սահմանագլխին: Յուրաքանչյուր քարի վրա արձանագրություն կա: Ամեն մեկը Դարաշամբ գյուղից իր կնիքը, դրոշմն է թողել այդ եկեղեցու վրա: Յուրաքանչյուր մարդ պարտավոր է իր կարողության Համաձայն բաժին բերել, որպեսզի մեր փշրանքները միանալով, մեկ ամբողջականություն կազմեն: Սա է Հիմնականը, թե ես իբրեւ անձ ի՞նչ կարող եմ անել մեր պատմության այս ամենավճռական պահին: Այսօր ամենաճակատագրական օրերն ենք ապրում: Հայաստանը դժվարությունների միջով է անցնում և՛ քաղաքականորեն, և՛ տնտեսապես, և՛ բարոյապես, և՛ ընկերային, և՛ միջազգային Հարաբերության տեսակետներով: Անկախությունը, որ այսօր ձեռք է բերվել Հայության կողմից, պետք է ամրացնել, պահել, չենացնել, ունենալը բավական է: Այն պետք է կարողանանք պահել մեր միությունը, աշխատանքով, պատասխանատվության զգացումով: Մենք այլևս պետք է շրջափոխվենք, Հոգևոր փոփոխություն ապրենք և չլինենք այլևս անՀաղորդ իրար Հետ, այլ մեկս մյուսի ձեռքի մեջ դնելով մեր ձեռքը, չենացնենք մեր Հայրենիքը: Բոլորս անձնական կամք գործադրենք, վերամտածենք մեր անելիքների մասին, անկախ Հայաստանի և Սուրբ Էջմիածնի Հրամայականի ներքո, նրանց՝ տեսիլքով, այս սքանչելի երկրի բարիքները վայելելով, կարողանանք նրան մեր Հավատարմությունը ցույց տալ: Եկեք է՛լ ավելի միասնանանք, որպեսզի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Մայր Հայաստանը դառնան բոլորիս ցանկալի Հայրենիքը Հավիտյանս Հավիտենից. ամեն:

ՃԵՊԱԶՐՈՒՅՑ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Պաշտոնական ճաշից հետո, հենց նույն սրահում տեղի ունեցավ մասլո հակիրճ ասուլիս, որին ներկա էին «Արև», «Հուսաբեր» օրաթերթերի, ինչպես նաև «Ջահակիր» շաբաթաթերթի թղթակիցները:

Առաջադրված հարցերը վերաբերվում էին նորանկախացյալ Հայաստանի տնտեսական, քաղաքական, հոգևոր և մշակութային բնագավառներին, Հայոց Եկեղեցու վերապարթոնք ապրող գործունեությանը, ընդհանրապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առջև ծառացած խնդիրներին, Եկեղեցիների համեղբայրության շրջանակներում Ամենայն Հայոց Հայրապետի և Մայր Աթոռի միաբանների կատարած և կատարելիք դերին:

Առաջադրված բոլոր հարցերին Գարեգին Ա Ամենայն Հայոց

Կաթողիկոսը պատասխանեց ամենայն մանրամասնությամբ և դուրսմղեցնելի:

Մամյո ասուլիսն իր արձագանքը գտավ վերոհիշյալ լրատվամիջոցներում:



Այստեղ՝ Ալեքսանդրիայում ևս Վեհափառ Հայրապետը հանդիպումներ ունեցավ պետական ու հոգևոր բարձրաստիճան պաշտոնյաների հետ և նրանց փոխանցեց հայ ժողովրդի պավակների սերն ու հարգանքը իրենց երկրորդ հայրենիքի նկատմամբ, փոխադարձաբար լսեց նրանց վկայությունները հայի շինարար ու երախտագետ հատկանիշների մասին:

Նորին Սրբությունը կարճատև առանձնապրույց ունեցավ նաև տեղի քաղաքային խորհրդի անդամների հետ:

Ուշ երեկոյան Ամենայն Հայոց Վեհափառն իր ջրախմբի անդամների հետ վերադարձավ Կահիրե:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՈՒՅՆ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԷ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍ Է-Ի ՀԵՏ

Հունվարի 12-ին, օրվա երկրորդ կեսին, Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընդունեց Հույն Ուղղափառ Եկեղեցու Ալեքսանդրիայի և Համան Աֆրիկայի Պատրիարք Նորին Սրբություն Պետրոս Է-ն:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչիյանը և Եգիպտոսում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Էդուարդ Նալբանդյանը:

Մեծ խանդավառությամբ և անթաքույց ջերմությամբ դիմավորելով Հայոց Հայրապետին՝ Պետրոս Է Պատրիարքը, իր Եկեղեցու հոգևոր դասի հետ համատեղ, Հունական Եկեղեցու շարականների երգեցողությամբ, Հայոց Հայրապետին առաջնորդեց դեպի Սուրբ Նիկողայոս Մայր տաճար:

Այստեղ կատարվեց կանոնական աղոթք, որից հետո Վեհափառ Հայրապետին ուղեկցող Հայ Եկեղեցու հոգևոր դասը երգեց «Հայր մեր»-ը: Եկեղեցում հանդիսավոր արարողակարգից հետո, բարձրաստիճան հյուրերն ուղղվեցին դեպի Պատրիարքարան, ուր տեղի ունեցավ փոքրիկ հյուրասիրություն, հրկթացս որի ծավալվեց մտերմիկ պրույց: Երկուստեք հետաքրքրող հարցերն առնչվում էին Հայ և Հույն Ուղղափառ Եկեղեցիների անցած ուղուն, ներկա իրավիճակին, ինչպես նաև հետագա անելիքներին՝ ի նպաստ երկու Եկեղեցիների հավատավոր հոտի բարօրության ու է՛լ առավել բարգավաճման:

Հանդիպման վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԷԻ ՀԵՏ

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ նաև Հույն Կաթողիկե Եկեղեցու Պատրիարք Նորին Ամենապատվություն Մաքսիմոս Հաքիմի հետ:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը և Եգիպտոսում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Էդուարդ Նայբանդյանը:

Հանդիպման ընթացքում շոշափվեցին ոչ միայն երկու Եկեղեցիների հոգևոր կյանքին առնչվող հարցեր, այլև Հայաստանի քաղաքական, տնտեսական, արվեստի բնագավառներին վերաբերող խնդիրներ, անդրադարձ եղավ նաև Ղարաբաղի հիմնահարցին:

Հանդիպման վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

ՊԱԵՏՈՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ ՀՀ ՂԵՍՊԱՆԱՏԱՆԸ

Երեկոյան ժամը 17.00-ին, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, Հայաստանի Հանրապետության դեսպանատանը արտակարգ և լիազոր դեսպան Է. Նայբանդյանի կողմից տրվեց պաշտոնական ընթրիք. որին մասնակցում էին Եգիպտոսում գտնվող կրոնական բոլոր հարանվանությունների հոգևոր առաջնորդները՝ Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Շրնուդա Գ Պապը՝ Սինոդի գլխավոր քարտուղար Բիշոյ եպիսկոպոսի և երեք եպիսկոպոսների ուղեկցությամբ, համայն սունիի մուսուլմանների հոգևոր փոխառաջնորդ Շեյխ Ֆաուզի Ֆադեյ Էլ-Ջիֆպաքը՝ երեք բարձրագույն շեյխերի ուղեկցությամբ, Հույն Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Պետրոս Է-ն, Հույն Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Նորին Ամենապատվություն Մաքսիմոս Ե Էլ-Հաքիմին՝ բարձրաստիճան հոգևորականների ուղեկցությամբ, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, Եգիպտոսի հայ կաթոլիկների առաջնորդ գերապայծառ Պետրոս Թարմունին, Եգիպտոսի արտաքին գործերի փոխնախարար Մոհամեդ Ֆաթիի Էլ-Շապլին, պետական բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, ազգայիններ:

Պաշտոնական ընթրիքի ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետին եղբայրական սիրո ջերմ խոսքեր ասացին Նորին Սրբություն Շրնուդա Գ Պատրիարքը, Շեյխ Ֆաուզի Ֆադեյ Էլ-Ջիֆպաքը, Հույն Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Պետրոս Է-ն, Հույն Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Մաքսիմոս Ե Էլ-Հաքիմին և մյուսները:

Այս բարիգալության խոսք ասաց ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Է. Նայբանդյանը՝ ի մասնավորի կարևորելով կրոնական գործիչների ժողովուրդների բարօրությանը, բարգավաճմանը, համերշխությանն ու բարեկամությանն ուղղված համատեղ գործունեության մեծ նշանակությունը, ողջունեց տարբեր դավանանքների պատկանող կրոնական բարձրագույն հեղինակությունների պատմական կարևորություն ունեցող այս հանդիպումը Հայաստանի Հանրապետության դեսպանատանը:

Ընթրիքի ընթացքում ծավալված ջերմ ու բարեկամական զրույցում արծարծվեցին հոգևոր և աշխարհիկ կյանքին առնչվող բազմաբնույթ հարցեր:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄՈՒՎՄԵԴ ՀՈՍՆԻ ՄՈՒԲԱՐԱՔԻ ՀԵՏ

Հունվարի 18-ի առավոտյան Ն.Ա.Օ.Տ.Տ. Գաբեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին իր նստավայրում ընդունեց Եգիպտոսի Արաբական Հանրապետության նախագահ Մոհամեդ Հոսնի Մուբարաքը:

Պաշտոնական հանդիպմանը ներկա էր նաև Եգիպտոսում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Էդուարդ Նալբանդյանը և Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը:

Բարեկամական ջերմ մթնոլորտում տեղի ունեցած հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը իր խորին շնորհակալությունը հայտնեց նախագահ Մուբարաքին այն հոգատարության համար, որ ցուցաբերվել և ցուցաբերվում է եգիպտական իշխանությունների և անձամբ նախագահի կողմից եգիպտահայատակ հայության և Հայ Եկեղեցու նկատմամբ:

Ողբունելով Ամենայն Հայոց Հայրապետին՝ Եգիպտոսի նախագահը բարձր գնահատեց եգիպտահայության դերը երկրի հասարակական և տնտեսական կյանքում, նշեց հայ-եգիպտական բազմաբնույթ հարաբերությունների ներկայիս բարձր մակարդակը:

Հանդիպման վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Եգիպտոսի Արաքական Հանրապետության նախագահ Հոսնի Մուբարաքի հետ ունեցած պաշտոնական հանդիպումից անմիջապես հետո Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հարցապրույց տվեց տեղական լրատվամիջոցների ներկայացուցիչներին:

Նորին Սրբությունը լրագրողներին հաղորդեց, որ նախագահ Հոսնի Մուբարաքին ինքը փոխանցել է Եգիպտոսի հանդեպ հայ ժողովրդի տածած խոր սերն ու հարգանքը, քանի որ վերջինս մշտապես իր կողքին ունեցել է և ունի Եգիպտոսի աջակցությունն ու օժանդակությունը:

Ապա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր և համայն հայության հարգանքը հայտնեց նախագահ Հոսնի Մուբարաքի արի կեցվածքի ու դիրքորոշման համար, դատապարտեց ահաբեկչությունը, ընդգծեց, որ Եգիպտոսը եղել և մնում է խաղաղության պատվար երկիր, իր անհանգստությունը հայտնեց Երուսաղեմում տիրող կացության հանդեպ և պնդեց, որ այն պետք է մնա համաշխարհային երեք կրոնների քաղաք:

Ապա Նորին Սուրբ Օծությունը պատասխանեց լրագրողներին հետաքրքրող մի շարք հարցերի:

ՍՈՒՐԲ ՊՍԵՄՐԱԳ ԿԱՀԻՐԵԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հունվարի 18-ին, կիրակի օրը, ժամը 11-ին, Կահիրեի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցում մատուցվեց եպիսկոպոսական Սուրբ և անմահ Պատարագ, որին ներկա էին Ղպտի Եկեղեցու հոգևոր առաջնորդ Նորին Սրբություն Շրնուդա Գ Պատրիարքը, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, կահիրեաբնակ ողջ հավատավոր հայությունը:

Օրվա պատարագիչն էր Արագածոտնի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Հոնթացս Սուրբ Պատարագի, «Հայր մեր»-ից առաջ, հոգեգրավ քարոզ խոսեց Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը՝ ի մասնավորի ասելով.

«Շատ սիրելի Շքնուգա Պատրիարք, Հուլյն, Ղպտի եկեղեցիների ներկայացուցիչներ, սիրեցյալ եղբայրներ ի Քրիստոս և Հավատարիմ Հայորդիներ:

Այսօր Հոգևոր մեծ ուրախությամբ եմ լցված, քանզի առիթը ունեցա ձեզ Հետ միասին մասնակցելու այսօրվա մատուցված Պատարագին: Ես փառք եմ տալիս Աստծուն, որ նման կազմակերպված Հավատավոր Համայնք ունենք: Այս օրը Մայր Աթոռի պատմության մեջ արձանագրվելու է եզրիպատահայության օր: Ձեր Հավատքը այսօր ինձ է՛լ ավելի զորացրեց:

Սիրելի Հավատացյալներ, մենք մեր Հավատքը ունենք և այլ եկեղեցիների Հետ կապված ենք եղել: Քրիստոնյա աշխարհը այսօր կտոր-կտոր է եղել, սակայն մենք, Հակառակ բոլոր տեսակի վտանգներին, վառեցիքը Հավատքի ջահը՝ առողջ ուղղափառ և տոկուն կենդանի որակմամբ: Ապրող Հավատք, ոչ թե Հիշող: Մենք այսօր պետք ունենք Հավատքի ամրության, գործության: Եթե մի ազգ զրկվի Հոգևոր, բարոյական առողջ ըմբռնումներից, ապա ո՛չ զենքը կարող է փրկել այդ ազգին, ո՛չ էլ մեկ ուրիշ բան: Ազգերի գործությունը իրենց հոգեկան, բարոյական ինքնըմբռնման մեջ է կայանում: Դրա Համար մեր Հայաստանը, որ այսօր վերարթնության ընթացքի միջով է անցնում, չեք կարող երևակայել, թե ինչպիսի դժվարությունների միջով է անցնում: Երևակայեք, որ 70 տարի Եզրիպտոսի բոլոր եկեղեցիների դռները գոցված լինեին, Հոգևորականները աքսորված լինեին, մամուլի մեջ Քրիստոս բառը գործածված չլիներ, դպրոցներում կրոնական ուսուցում չտրվեր... այսօր կլինե՞ր Եզրիպտոսը այն, ինչ որ է:

Մարդիկ Աստծու դեմ ըմբոստանալով, իրենք իրենց են փոքրացնում և տկարացնում: Դա փաստվել է դարերի ընթացքում: Այսօր, երբ մենք վերադարձել ենք մեր Հավատքին, առողջ Հայկական ավանդություններին, ուզում եմ, որ բոլորդ անցնեք նորոգության միջով: Ո՛վ Տեր, աղաչում եմ Քեզ, Քո շունչը թող փչի այս ժողովրդի վրա: Հազար պատճառ կարող ես գտնել՝ Հազար բան չանելու Համար, բայց մեկ պատճառ կարող ես ունենալ՝ Հազար բան անելու Համար: Եվ այդ պատճառի անունը սեր է: Եթե որևէ մի բան սիրես, Հազար ձև կգտնես՝ այն իրականացնելու Համար: Եթե սիրում եք ձեր Հայրը լեզուն, լավ սովորեք արաբերենի Հետ միասին: Ո՛վ ասաց, որ երկու լեզու Հնարավոր չէ իմանալ, չորս-հինգ լեզվով խոսողներ կան:

Երկրորդ. մենք Մայր Հայրենիք ունենք. Մայր Հող, Մայր Եկեղեցի, որ դարեր-դարեր գոյություն ունի: Ձեզանից շատերի Համար Հայաստանը միայն տեղեկությունների, ծանոթությունների երկիր է: Սակայն Հայաստանը շարունակվող կյանք է, մանավանդ այսօր: Դուք ամենաերջանիկ սերունդն եք. քանի որ այսօր ազատ, անկախ է Հայաստանը: Նա, ով իր Հայրենիքի զարգացման Համար չի ծառայում, նա իրավունք չունի իրեն այդ Հողի տերը կարծելու: Տեր կղառնա աշխատանքով, ծառայությամբ քրտինքը խառնելով այդ Հայրենիքին: Այս տարի ես որքան ուրախ եղա, երբ եզրիպատահայ ուսանողներ եկան Սուրբ էջմիածին: Հայաստանում երբ դպրոցական տարեշրջանը վերջանում է, կատարվում է վերջին զանգի արարողություն: Այդ ժամանակ մոտավորապես 20.000 ճերմակ Հազած աշակերտներ Մայր Աթոռ են գալիս: Գալիս են, մոմ վառում, աղոթք անում, և ես, նայելով նրանց, Հիանում եմ: Նրանց բոլորի կողմից շատ բարևներ եմ բերել ձեզ: Նրանք շատ դժվար օրեր են ապրում: Այսպիսի գեղեցիկ աթոռներ, սրահներ չունեն, սակայն Մեսրոպ Մաշտոցն էլ քարայրում ապրեց: Կարևորը Հոգին է: Ձմռան ցրտին դպրոց չեն գնում, որովհետև ջեռուցում չկա: Սակայն,

Հակառակ այդ դժվարին պայմաններին, պատիվ նրանց, նրանք շարունակում են իրենց Հավատարմությունը, քանզի այլ ճանապարհ չունենք: Նա, ով դպրոցը արհամարհում է, ինքն իրեն է սպանում:

Այն ազգը, որ դպրոցին մեծ կարևորություն էի տալիս, անձնասպանություն է անում: Մի գեղեցիկ խոսք կա, որ ասում է. եթե ուզում ես բանտ փակել, դպրոց բաց արա: Այսինքն՝ դպրոցը կրթական օջախ է, ուր մարդը փակել, դպրոց բաց արա: Հայը սովորում է Հայ լինել, մի խոսքով, մեր սովորում է մարդ լինել, Հայը սովորում է Հայ լինել, մի խոսքով, մեր մարդկային և ազգային ինքնության, ով լինելու պատրաստության օջախը: Ես չէի լինի նա, ով եմ, եթե դպրոց զնացած չլինեի և եթե դպրոցն էի մանայի: Ռեթեոս Բերբերյանը Պոլսում դպրոց է բացել, և նրա զավակները՝ Եահանը ու Օնիկը, այստեղ՝ Կահիրեում դպրոց բացեցին, և այդ դպրոցից մեծ մարդիկ դուրս եկան: Ռեթեոսը մի բանաստեղծություն է գրել դպրոցի մասին, որում ասում է. «Ճաճար Հրաշագործ, վսեմ ձուլարան, ուր կապարը՝ ոսկի, նյութը՝ Հոգի կդառնան»: Դպրոցը Հրաշագործ տաճար է, վսեմ ապրումների ձուլարան, ուր կապար դնես, ոսկի կդառնա, ուր ոսկի դնես, Հոգի դուրս կգա: Փյոյսոփայություն է, կյանքի ըմբռնում, մարդու ինքնահասկացողություն: Ամեն ինչ ուտել-խմելով, քեֆ անելով չի որոշվում: Դուք, սիրելի աշակերտներ, եթե լավ երգել, արտասանել, գիտության լեզուն և էլի ուրիշ բաներ չսովորեք, ապա ի՞նչ է կյանքը: Մնել, աճել, մեծանալ, ուտել-խմել, Հաճոյանալ. ա՞յս է կյանքը: Եթե այս է, ապա ինչո՞ւ ենք տարբերվում կենդանիներից: Նրանք էլ են ուտում, խմում, մեծանում: Այսպես է, սակայն մարդը իր մեջ Աստծու պատկերն ունի, մենք պետք է Հոգեկան, գեղարվեստական, կրոնական արժեքներին մեծ կարևորություն տանք: Այժմ մարդիկ սկսել են դրանց կարևորություն չտալ, և դրա համար ես ցանկանում եմ, որ դուք չկորցնեք դպրոցի Հոգին: Գաղափարի, Հոգեկան ապրումի, գեղարվեստական ճաշակների, երգի, բանաստեղծության Հոգին երջանկացնող, վեհացնող բաների սերը ձեր մեջ պահեք, սովորեք և վարժվեք: Քիչ առաջ արտասանածս բանաստեղծությունը սովորել եմ, երբ ձեր նման փոքրիկ երեխա էի, և չի կորչի: Կերածս կկորչի, հագածս կմաշվի, սակայն Հոգեկան արժեքը ո՛չ մահ ունի, ո՛չ ժամանակ է ճանաչում և ո՛չ էլ աշխարհագրական տարածության մեջ կսահմանափակվի: Հետևաբար, եկեք այսօր բոլորս էլ այս երեք ասածներս իրագործենք ի փառս Աստծու և ի բարօրություն Հայաստան աշխարհի»:

Վեհափառ Հայրապետը ներկա հավատավոր ժողովրդին հաղորդեց նաև, որ, եկեղեցի ժամանելուց առաջ, հանդիպում է ունեցել նախագահ Հոսնի Մուրադաբի հետ, և նշեց. «Իր սերը, Համարումը և Հավատքը Հանդեպ Հայության՝ զիս առավել ևս գորացրին»:

Խոսելով հայ և դպրոցի միջեկեղեցական կապերի մասին՝ Գարեգին Ա Կաթողիկոսն ասաց. «Մենք մեկ Հավատք ունինք: Հայոց Եկեղեցին և Ղպտի Եկեղեցին մեկ եղած են 1.400 տարիներե ավելի: Տեսե՛ք, քրիստոնյա աշխարհը կտոր-կտոր եղած է, բայց մենք, Հակառակ բոլոր դժվարություններին, Հակառակ բոլոր տեսակի Հալածանքներուն, մեր Հավատքը ամուր պահած ենք: Մենք այսօր պետք ունինք, շատ պետք ունինք այս Հավատքի ամրության, այս Հավատքի գործության, այս Հավատքի ներգործության՝ մեր գաղութներու մեջ»:

«Զերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

ինձ խիստ հուզում է իմ այս առաջին Հովվապետական այցելությունը

Եզիպտոսի դարավոր Հայոց Համայնքին և Հայոց Թեմին, ինչպես նաև իմ և Ղպտի Եկեղեցու պետի ներկայությունն այս կիրակի օրը այստեղ մատուցվող Պատարագին:

Իս ինձ շատ զորացած և ներքուստ Հարստացած եմ զգում Ձեր ներկայությունից մեր կողքին, այս եկեղեցում: Դուք մի նոր, վառ գույն, շիտակ էկումենական բովանդակություն ավելացրեցիք մեր Հայ քրիստոնեական Հավատքին, դրսևորեցիք միասնականություն՝ ընդդեմ քրիստոնեական Հավատքի՝ ճշմարիտ, ի սկզբանե սովորույթին, ավանդույթին, որի հարցում մենք միահամուռ ենք, քանի որ միասին աղոթում ենք միևնույն Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին միևնույն սիրով: Արտիս խորքում զգում եմ, որ այս օրը մեր Հայ Ժողովրդի և Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի պատմության մեջ կարճաճանադրվի իբրև Եզիպտահայ Համայնքի օր: Այս օրը մեր պատմության մեջ Եզիպտահայ Համայնքի օրն է:

Այսօր առավոտյան նախքան դալս այս եկեղեցի, ես մեծագույն պատիվն ունեցա տեսակցել Եզիպտոսի Նախագահի՝ Մոհամեդ Հոսնի Մուբարաքի հետ:

Ինձ շատ հուզեց այն ջերմությունը, որով Դուք ինձ ընդունեցիք, թե ինչպես մենք զրուցեցինք այն մասին, որ բոլոր քրիստոնյա մարդիկ մեկ ընդհանուր աղոթ, ժողովուրդ են՝ անկախ տարբեր կրոնական Համոզմունքներից: Ինձ վրա մեծ տպավորություն դրածն է Ձեր ոգու անմիջականությունը: Մենք միմյանց ճանաչել ենք, բավականին երկար ժամանակ, երբ դեռևս ոչ՝ Դուք, ոչ էլ ես չէինք ստանձնել այն ծայրագույն, սակայն նաև ծանրագույն պատասխանատվությունը՝ Դուք որպես Ալեքսանդրիայի Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, ես էլ՝ որպես Հայ Ուղղափառ Եկեղեցու Ամենայն Հայոց Կաթողիկոս: Մենք զրուցեցինք այսօրվա մարտահրավերների, խնդիրների մասին, որ մեզ առաջադրում է ներկայիս պատերազմական իրավիճակը: Խոսեցինք արդարության մասին, այն վայրերի մասին, ուր այցելել է Հիսուս Քրիստոսը: Այդ սրբավայրերը սուրբ են մնում եկեղեցիներ հաճախող, արարողությունների մասնակցող, աղոթող, երկրպագող մարդկանցով: Ահա թե ինչու ես շատ երախտապարտ եմ Եզիպտոսի իշխանություններին այն վերաբերմունքի համար, որ նրանք ունեն իրենց երկրում ապրող բոլոր ազգությունների հանդեպ: Իսկապես, հենց դա է այս ազդի ուժը, զորությունը: Մենք և Ղպտի Ուղղափառ Եկեղեցին միասնաբար կիսել ենք Քրիստոսի ժառանգության Հարստությունն ավելի քան 15 դարեր: Մենք կենդանի ենք պահել մեր Հավատքը, Հավատարիմ մնացել առաքյալների Սուրբ Գրքերի ուսմունքին և ուղղափառ Հայրերին: Այսօր մենք պետք է էլ ավելի զգալի և շոշափելի արտահայտություն տանք այդ միասնությանը, տոկունությանը, Հաստատակամությանը, Հավատարմությանն այն Հավատքին, որ մեր Եկեղեցու սրբերն են մեզ շնորհել ըստ Սուրբ Գրքի:

Պատկերացրեք, որ մեր Հայաստան աշխարհը, մեր Հայրենիքը ենթարկվում է այն գործընթացին, որը ես անվանում եմ Հոգու կերպարանափոխում, վերափոխում, վերադարձում: Ներկայումս Հայաստանը դժվարին ժամանակներ է ապրում, շատ փորձություններ դիմադրավում: Պատկերացրեք, որ Քրիստոսի անունը 70 տարի չէր հիշատակվում մամուլում, և եթե անգամ Հիշատակվում էր, ապա՝ ծաղրածանակի ենթարկելու, քարկոծելու համար: Պատկերացրեք, թե ինչ կլինեք մարդկանց վիճակը, եթե Հավատքը դուրս մղվեք նրանց միջից: Որոշ քահանաներ թողեցին

ծառայությունը, ոչ մի ճեմարան չէր գործում, չկային հոգևոր հրատարակություններ, կիրականորա դպրոցներ, չկար կրոնական ուսուցում դպրոցներում, պաշտամունքի ոչ մի հասարակական վայր: Քրիստոնեական հավատքը դուրս էր մղվում մարդկանց հասարակական կյանքից: Այժմ այդ համակարգը փլուզված է: Աստված նորից տոնում է իր հաղթանակը, քանի որ պատմությունը երբեք չի կարող հաղթել Աստծուն:

Մեր բանաստեղծներին մեկը՝ Վահան Թեքեյանը, այստեղ, Հենց այս քաղաքում, կոտորածից անմիջապես Հետո, գրել է. «Հարության շունչն է եկել՝ ձեր մեջ Աստծու ոգու միջոցով: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հարության նոր միտքն է տանջում ձեր մարմինը»:

Այսօր Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնն է, որը մեզ հիշեցնում է Աստծու անընդհատ և անխախտ ներկայության մասին մեր մեջ, մեր հոգում և մեր սրտում: Աստված մեզ Հետ է:

Իմ թող Աստված միշտ մեզ Հետ լինի և է՛լ ավելի մերձեցնի մեզ միմյանց, քանի որ մենք ընդմիշտ ծառայում ենք միեկույն հավատքին, միեկույն Տեր Հիսուս Քրիստոսին և միեկույն Եկեղեցուն: Ամեն»:

Գարեգին Ա Կաթողիկոսի հայրական պատգամին հաջորդեց Նորին Սրբություն Շրնուդա Գ Պատրիարքի խոսքը, որով նա ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին իր օրհնաբեր այցելության ուրախալի առիթով, հոգևոր հայրերին ու ներկաներին և ընդգծեց երկու Եկեղեցիների միջև պատմական խորը արմատներ ունեցող եղբայրական կապերը: Շրնուդա Գ Պատրիարքն ընդգծեց նաև, որ «Հայ ժողովուրդը մեզ բարեկամ ժողովուրդ է: Ձեր Սրբերը մեր Սրբերն են, ձեր նահատակները մեր նահատակներն են, ձեր Հայրերը մեր Հայրերն են»:

Դպտի Եկեղեցու հոգևոր առաջնորդը պատմեց իր՝ Հայաստան և Միջինասիական երկրների կառավարած այցելության մասին, ողջունեց Հայաստանում հետխորհրդային ժամանակաշրջանում սկզբնավորված քրիստոնեական վերապարթոնքը և շեշտեց երիտասարդ սերնդի կրոնական դաստիարակության կարևորությունը.

«Ձերդ Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոս,

սիրեցյալ եղբայրներ և քույրեր:

Ես շատ ուրախ եմ, որ այսօր մեզ Հետ միասին գտնվում եմ այստեղ, Սր. Գրիգոր Լուսավորիչ Հայկական եկեղեցում, որտեղ ներկա է նաև Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայ ժողովուրդը մեր եղբայր ժողովուրդն է: Նրանք պաշտում են նույն սրբերին, նույն նահատակներին և նույն Հայրերին, ինչպես և մենք՝ եգիպտացիներս: Մենք ունենք մի հավատք, մի աստվածաբանություն: Դա մեր Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների հավատն է: Մենք ապրել ենք միանման պատմական ժամանակաշրջաններ:

Ձերդ Սրբություն, ես ողջունում եմ Ձեզ և Ձեր բոլոր ուղեկիցներին:

Մեր բարեկամությունը սկիզբ է առել ավելի քան 13 տարի առաջ, երբ մենք Հանդիպեցինք:

Ինչպես արդեն նշեցի, մեր պատմության ընթացքում եղել են դժվարին ժամանակաշրջաններ, հատկապես Օսմանյան կայսրության օրոք, սակայն Եկեղեցին միշտ էլ ուղի է կանգնել այդպիսի ժամանակաշրջաններից Հետո: Ձերդ Սրբություն, ինձ վրա մեծ տպավորություն գործեց հատկապես Ձեր

այն միտքը, թե Հայ Առաքելական Եկեղեցին սովետական աթեիստական վարչակարգի ավելի քան 70 տարիներ տևած ժամանակաշրջանից հետո կերպարանափոխման, վերափոխման կյանք, ուղի է տաք դրել: Մեր երկրում՝ Եզիպտոսում, Եկեղեցու վերազարթոնքը սկսվեց կիրակնօրյա դպրոցների դործունեությամբ: Մենք նախաձեռնեցինք Հովվապետական խնամք և Հոգաժուլություն յուրաքանչյուր մանուկի նկատմամբ՝ սկսած նրա կյանքի ամենավաղ, սկզբնական շրջանից: Մանուկները մեծանում, դառնում են երիտասարդներ, և մենք խնամք ու Հոգաժուլություն ենք տածում նաև երիտասարդության նկատմամբ: Մենք դեռևս շատ անելիքներ ունենք, և ես մտադիր եմ եպիսկոպոսներից մեկին Հանձնարարել երիտասարդության Հոգսը: Այդ եպիսկոպոսը թեմ էի ունենա: Նրա միակ պատասխանատվությունը, պարտականությունը կլինեն մանուկները:

Արևմուտքի երկրներում, ամենուրեք, ուր ես այցելել եմ, միշտ էլ ասել եմ, որ առանց երիտասարդության Եկեղեցին անապագա Եկեղեցի է: Մեր սերունդն ասում է նոր խոսք, սակայն այն իրականություն է դարձնում նոր սերունդը:

Զերդ Սրբություն, ես շատ մեծ Հրճվանք եմ ապրում, երբ լսում եմ, թե ինչպիսի անսահման Հայրապետական խնամք և գուրգուրանք եք տածում մանուկների և երիտասարդության նկատմամբ: Մանուկների և երիտասարդների Համար պատասխանատվությունը Եկեղեցու պատասխանատվությունը, պարտականությունն է, ինչպես նաև ընտանիքի, Հատկապես ծնողների և ընտանիքի մյուս բոլոր անդամների պատասխանատվությունը:

Ես հուսով եմ, որ Զեր տածած Հայրական խնամքը և Հոգատարությունը Հայ մանուկների և երիտասարդների Հոգևոր կյանքի, Հոգևոր արժեքների, կրթության և դաստիարակության Հանգեպ այսուհետև էլ ավելի կխորանա Հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու: Ամեն»:

Վերջում Նորին Սուրբ Օծությունը, ի նշան իր անդրաճիկ հովվապետական այցելության եզրափակապես թեմ, մի սկիի նվիրեց Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցուն, որպեսպի ամեն անգամ, երբ այդ սկիիից Ս. Հաղորդություն ստանան հայ հավատացյալները, նաև զգան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնաբեր ջունյր:

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԲԱԿՈՒՄ ՁԵՏԵՂԱԾԸ

ԽԱՉԲԱՐԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՅՄԱՆ ՍՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հավարտ Սուրբ և անմահ Պատարագի, երկու Եկեղեցիների հոգևոր առաջնորդները, ամպհովանու ներքո և բազմաթիվ հավատացյալների ժափողջույնների ուղեցկությամբ, առաջնորդվեցին դեպի Եկեղեցու բակ, ուր Նորին Սրբությունը կատարեց Հայաստանից իր հետ բերած և բակում վետեղված խաչքարի հանդիսավոր բացումը՝ ի հավերժացումն Մեծ եղեռնի անմեղ զոհերի անմահ հիշատակի:

Բացման արարողակարգից հետո Վեհափառ Հայրապետը, դիմելով ներկաներին, ասաց. «Բանաստեղծներեն Լեոն Զավեն-Սյուրմեյանը գրած է. «Մեռելներու իբրև խաչ, ես այս ծագր տնկեցի»: Ես կուզեմ, որ այս խաչքարը ձեր բոլորին Համար ըլլա ծառ կենդանի, ծառ կենդանարար, ոչ թե մահվան հուշարար, այլ կյանքի մղիչ ուժ մեր նոր սերունդին»:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ

Այնուհետև վեհապատ Հայրապետը և Շրնուդա Գ Պատրիարքը, հանդիսավոր թափոռի ուղեկցությամբ, առաջնորդվեցին դեպի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարևանությամբ գտնվող Ալգալին առաջնորդարանի դահլիճ, ուր Հայ Առաքելական Եկեղեցու պետ Գարեգին Ա Կաթողիկոսը և Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պետ Շրնուդա Գ Պատրիարքը ստորագրեցին համատեղ հայտարարություն՝ Հայ և Ղպտի Ուղղափառ Եկեղեցիների միջև հետագա համագործակցության հարաարարագիրը:

Համատեղ հայտարարության ստորագրումից առաջ Նորին Սուրբ Օծությունն ասաց.

«Այս օրը ոչ թե պատմությունը վերհիշելու, այլ պատմություն կերտելու օր է: Այս օրը մի նոր էջ է բացում մեր երկու ժողովուրդների պատմության, մեր Հարատևող բարեկամության, սերտ Համագործակցության մեջ: Այս օրը Ղպտի Ուղղափառ Եկեղեցու և Հայ Ուղղափառ Եկեղեցու միասնականության ուղղակի և որոշակի դրսևորումն է: Եվ այսօր ես այս փաստաթուղթը իմ ի Քրիստոս եղբոր՝ Շրնուդա Գ Պատրիարքի Հավանության և Համաձայնությամբ կանվանեմ ԿաՀիրեթի փաստաթուղթ»:

Երկու Եկեղեցիների հոգևոր առաջնորդները հայտարարագրում գոհունակությամբ նշեցին և հաստատեցին Հայ և Ղպտի Եկեղեցիների քրիստոնեական հավատքի դարավոր միությունը, որ հաստատված է Սուրբ Գրոց հիման, Ընդհանուր Եկեղեցու նախնական ավանդության վրա և հռչակված առաջին երեք Տիեզերական ժողովներով: Գարեգին Ա Կաթողիկոսը և Շրնուդա Գ Պատրիարքը միաժամանակ հանձն առան Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների խմբում է՛լ ավելի սերտացնել երկու Եկեղեցիների միջև համագործակցությունը համեղբայրության քնազավառում, կրթական, ընկերային ասպարեզներում:

COMMON DECLARATION AND MESSAGE

issued by

HIS HOLINESS POPE SHENUDA III,

Patriarch of The Coptic Orthodox Church

AND HIS HOLINESS KAREKIN I,

Catholicos of All Armenians

We humbly give thanks to God, the Father, the Son and The Holy Spirit who once more graced us with a new and richer opportunity of giving tangible expression to our mutual brotherly love, to our unity in the Christian faith and to our common ministry of service to the people entrusted to our spiritual care. We are, indeed, deeply grateful to Him who enabled us, during the first pastoral visit of His Holiness Karekin I to His flock in Egypt, to meet together here, in Cairo, Egypt, in the days between the 14th and 18th January in this spiritually most

enriching season of the feast of Nativity and Epiphany, to pray together and to deliberate together on our common calling in the service to our Lord Jesus Christ, through our churches within the family of the Oriental Orthodox Churches.

How rewarding it was to once more reaffirm the unity of our Christian faith that has been faithfully maintained all along the past centuries, and which is based on the Holy Scriptures on the early church Tradition as promulgated by the first three Ecumenical Councils, namely, of Nicea (325), of Constantinople (381) and of Ephesus (431). We renew our commitment to give more concrete expression to that unity in the life and witness of our churches in faithful obedience to the will of our Lord Incarnate, Jesus Christ, and in continuation of the Orthodox legacy of the sacred Tradition of our Church Fathers.

We render thanks and glory to the Holy Trinity for having blessed our Coptic and Armenian Orthodox Churches in the past centuries of consecrated life and sound teaching of our saints and martyrs, and for the unshaken and unbroken continuity in the unity of faith which was "once for all delivered to the saints" (Jude, 3), and for the spiritual well being of our beloved peoples.

We commit ourselves to promote in more visible and tangible ways the close cooperation of our respective Churches of the family of Oriental Orthodox Churches in our involvement in the Ecumenical Movement on local, regional and world levels, to pursue more actively our common task in facing and meeting the new challenges of the modern world where extreme secularist trends of life are so deeply affecting the spiritual, moral and social life of our people in this century which is drawing its end. In Christian hope we look forward to the dawn of the third millennium of our Christian history, and earnestly pray our Lord to make it a time of greater spiritual renewal.

We appeal to all our Diocesan Metropolitans, bishops, parish priests and lay people in our own countries of Egypt and Armenia as well as in the worldwide Diaspora, to develop closer relationships and to advance in the genuine ecumenical ways of mutual cooperation by being motivated by the unity and demand of our faith and by the concern for the spiritual health and creative service of our people around the world, particularly in our service to the young generation.

We encourage the pursuit of greater collaboration in the areas of the Theological Education, to bring into focus the living traditions of our respective churches. Exchange of students and professors of theology is one of the immediate ecumenical tasks that we recommend to our Theological schools and other centers engaged in theological research and studies, to pursue more actively today than has been done before.

The sound and healthy edification in the Christian faith of the children and the adult, in accordance with the Orthodox doctrine and moral teachings of our churches, is another area where we instruct our churches to create new and more relevant and productive ways of cooperation.

We endorse the promotion of the social services of our churches particularly for the poor and the under-privileged, for the sick and the handicapped. We

suggest to all our organizations with diaconal vocation and mandate to engage in increased and concerted efforts in this area of need.

We look forward to closer and more frequent mutual visitations between not only Heads of our churches but also between Metropolitans, bishops, priests and other servants, with a perspective and a vision for mutual solidarity and enrichment.

We pray with all the members of our churches for the peace and justice in the world and for true human prosperity of Egypt, of the whole of the Middle East, of Armenia and Nagorno-Karabagh and for the world at large. May God guide us, our churches and all the peoples in the way to peace for the Kingdom of God for His glory.

Karekin I

Karekin I

Shenouda III

Shenouda III

18th January 1998 Cairo, Egypt

**ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՂԱՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՊ ՆՈՐԻՆ
ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՇԸՆՈՒԴԱ Գ ՊԱՏՐԻԱՐԺԻ ՀԱՄԱՏԵՂ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԳԱՄԸ**

Մենք խոնարհաբար գովաբանում ենք ընծայում Աստծուն՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, որ ևս մեկ անգամ մեզ շնորհեց մի նոր և ավելի հարուստ Հնարավորություն՝ խոսուն՝ արտահայտություն հաղորդելու մեր եղբայրական փոխադարձ սիրույն, քրիստոնեական հավատքի մեջ մեր միությանը և մեր հոգևոր խնամքին հանձնված ժողովրդի ծառայության մեր ընդհանուր առաքելությանը: Մենք իսկապես խորապես շնորհակալ ենք Նրան, որ, Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսի կողմից նշխարաբան իր հոտին տված անդրանիկ հովվապետական այցելության ընթացքում, մեզ հնարավորություն ընծայեց՝ միմյանց հանդիպելու այստեղ՝ Կահիրեում, նշխարաբան, հունվարի 14-18-ը, Սուրբ Մենդյան և Աստվածաշայտության տոնի այս հոգևոր հարստացման շրջանում, միասին աղոթելու և միասնաբար խորհրդածելու մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ծառայության մեջ մեր ընդհանուր կոչման մասին՝ մեր եկեղեցիների միջոցով՝ Արևելյան Ուղղափառ եկեղեցիների ընտանիքում:

Որքան մխիթարական էր մեկ անգամ ևս հաստատել մեր քրիստոնեական հավատքի միությունը, որ հավատարմորեն պահպանվել է անցյալ բոլոր դարերի ընթացքում և որը հիմնված է Սուրբ Գրքի վրա, վաղ եկեղեցական ավանդության վրա, ինչպես որ բանաձևված է առաջին երեք Տիեզերական ժողովների կողմից, որ է Նիկիա (325), Կոստանդնուպոլիս (381) և Եփեսոս (431): Մենք վերանորոգում ենք մեր հանձնառությունը ավելի շոշափելի արտահայտություն հաղորդելու այդ միությանը մեր եկեղեցիների կյանքի և վկայության մեջ, հավատարիմ հնազանդությամբ մարմնացյալ Տիրոջ՝

Հիսուս Քրիստոսի կամքին և ի շարունակութիւն մեր Եկեղեցու հայրերի սրբազան ավանդութեան ուղղափառ ավանդին:

Մենք զօհութիւն և փառք ենք վերառաքում Սուրբ Երրորդութեանը՝ մեր Սրբերի և Նահատակների սրբագործված կյանքի և խոստուն ուսմունքի անցյալ դարերում մեր Ղպտի և Հայ Ուղղափառ Եկեղեցիները օրհնելու և հավատքի միութեան անսասանելի ու անխափան շարունակականութեան համար, որը «մեկընդմիջ տրվեց Սրբերին» (ՀՈՒԴԱ Ա 3), և մեր սիրեցյալ ժողովուրդների հոգևոր պայծառութեան համար: Մենք հանձն ենք առնում ավելի տեսանելի և խոստուն ձեւերով խթանել Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ընտանիքում մեր համապատասխան Եկեղեցիների սերտ համագործակցութիւնը տեղական, շրջանային և համաշխարհային մակարդակների վրա էկումենիկ շարժման մեր մասնակցութեան մեջ, ավելի ակտիվորեն առաջ տանել մեր ընդհանուր խնդիրը ժամանակակից աշխարհի նոր մարտահրավերների հանդիպելու և դիմագրավելու մեջ, երբ իր ավարտին մոտեցող այս՝ դարում կյանքի ծայրահեղ աշխարհայնական հակումները այնքան խորապես ազդում են մեր ժողովրդի հոգևոր, բարոյական և ընկերային կյանքի վրա: Քրիստոնեական Հուսով մենք նայում ենք մեր քրիստոնեական պատմութեան երրորդ հազարամյակի արշալույսին և ջերմորեն աղոթում մեր Տիրոջը, որպեսզի այն վերածի ավելի մեծ հոգևոր վերանորոգութեան մի ժամանակաշրջանի:

Մենք կոչ ենք ուղղում մեր բոլոր թեմակալ առաջնորդներին, եպիսկոպոսներին, ծխական քահանաներին և աշխարհականներին՝ մեր երկրներում՝ Եգիպտոս և Հայաստան, ինչպես նաև ողջ Սփյուռքի տարածքում զարգացնելու սերտ հարաբերութիւնները և իրապես էկումենիկ ճանապարհներով առաջ տանելու փոխադարձ համագործակցութիւնը՝ մղվելով մեր հավատքի միութեամբ և հրամայականով ու ողջ աշխարհում մեր ժողովրդի, մասնավորապես երիտասարդ սերնդի, հոգևոր առողջութեան և ստեղծագործ ծառայութեան հանձնառութեամբ:

Մենք քաջալերում ենք առավել համագործակցութեան մղումը աստվածաբանական կրթութեան բնագավառում՝ կիզակետի տակ վերցնելու մեր համապատասխան Եկեղեցիների կենդանի ավանդութիւնները: Աստվածաբանութեան ուսանողների և դասախոսների փոխանակումը այն անմիջական էկումենիկ առաջադրանքներից է, որ մենք առաջարկում ենք մեր աստվածաբանական դպրոցներին ու աստվածաբանական հետազոտութեան և ուսումնասիրութեան մեջ ընդգրկված՝ մյուս կենտրոններին, որ պետք է հետապնդել ավելի ակտիվորեն այսօր, քան արվել է նախկինում:

Մանուկների և չափահասների խոստուն և առողջ ուսուցումը քրիստոնեական հավատքի մեջ, մեր Եկեղեցիների ուղղափառ դավանանքին և բարոյական ուսուցումներին համապատասխան, մեկ այլ բնագավառ է, որտեղ մենք մեր Եկեղեցիներին հանձնարարում ենք համագործակցութեան նոր, ավելի շոշափելի և արդյունավետ ուղիներ ստեղծելու:

Մենք զորավիգ ենք կանգնում մեր Եկեղեցիների ընկերային ծառայութեան խթանմանը, մասնավորապես աղքատների և իրավազուրկների, հիվանդների և անդամալույծների համար: Մենք հանձնարարում ենք մեր բոլոր կազմակերպութիւններին, որ ունեն ծառայողական կոչում և պաշտոն, ներգրավվելու հարաճուն և ներդաշնակ ջանքերի մեջ կարիքի այս բնագավառում:

Մենք ակնկալում ենք ավելի սերտ և ավելի հաճախ փոխադարձ

այցելություններ ոչ միայն մեր եկեղեցիների պետերի, այլև առաջնորդների, եպիսկոպոսների, քահանաների և մյուս սպասավորների միջև՝ փոխադարձ համերաշխության և հարստացման հեռանկարով և տեսլքով:

Մեր եկեղեցիների բոլոր անդամների հետ միասին մենք աղոթում ենք աշխարհի խաղաղության և արդարության համար եզրիպտոսի, ողջ Մերձավոր Արևելքի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի և ընդհանրապես աշխարհի իրական բարգավաճման համար:

Թող Աստված մեզ, մեր եկեղեցիներին և բոլոր ժողովուրդներին առաջնորդի խաղաղության ճանապարհով Աստծո Արքայության և իր փառքի համար:

ԳՐԵԳՐԻՆ Ա

ՇԸՆՈՒԴԱ Գ

18 հունվարի 1998 թ., Կահիրե

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՕՐՀՆԱԲԵՐ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«ՄԱՐԳԱՐԻՏ-ՊԱՅԾԱՌ ՀԱՎՈՐՅԱՆ» ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ

Համատեղ հայտարարության ստորագրումից հետո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, եզրիպտահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Չավեն արքեպս. Չինչիյանի, ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Էդուարդ Նալբանդյանի, Ազգային իշխանությունների ներկայացուցիչների ուղեկցությամբ այցելեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարևանությամբ կառուցված «Մարգարիտ-Պայծառ Հակոբյան» Մատենադարան:

Մատենադարանի տնօրեն Էդուարդ Հակոբյանի բարիգալստյան և մեծարանքի խոսքերից հետո, Վեհափառ Հայրապետին անհրաժեշտ տեղեկություններ տրվեց մատենադարանում մեծ խնամքով պահվող և ճաշակով ցուցադրված հազվագյուտ գրքերի և 19-րդ դարի հայ ակադեմիկոս Երանդիտների՝ Համբարձում Լիմոնճյանի, Կոմիտասի, Մակար Եկմալյանի, Նիկողոս Թաճյանի, Հակոբ Սյվապյանի և ուրիշների անտիպ ձեռագրերի մասին:

Վեհափառ Հայրապետը, ի տես և ի յուր կատարված հայանվեր մեծ աշխատանքի, իր գոհունակությունն ու հիացմունքը հայտնեց Էդուարդ Հակոբյանին, ինչպես նաև օրհնեց Մարգարիտ-Պայծառի անմահ հիշատակը:

Ի նշանավորումն հայրապետական օրհնաբեր այցելության, տիար Էդուարդ Հակոբյանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մատենադարանին նվիրեց մի հին «Հմայիլ»:

Այցելության վերջում Ամենայն Հայոց Հայրապետը իր տպավորությունների հետևյալ արձանագրությունը թողեց մատենադարանի «Ոսկեմատյան»-ում.

«Հոգեկան խոր բավարարություն զգացի այս գրքի և արվեստի աշխարհն ներս: Փոքրիկ շենք մը որպես կառուցվածք, բայց անչափելի և անտարազելի աշխարհ մը Հոգեկան ապրումներու, Հիշողություններու և միանգամայն աղբյուր մը Հաղորդության՝ մահ չճանչցող արժեքներու:

ՄԻՋԻՆԻՍՏԵՐ ԵՎ ՄԻՋԻՆԻՍՏԵՐ ԵՎ ՄԻՋԻՆԻՍՏԵՐ





ՀԱՄԱՆԵՐ ՄԴՈՒՄ ԴԴՏԱԿԱՆ Ա. ՄԱՐԿՈՍ ԵՎԵԴԵՓՈՒՄ

Բարձրորեն կգնահատեմ այդ աշխարհին Հավատարիմ և ընտիր սպասավոր Մայեստրո Հեղուարդ Հակոբյանը, իր անխոնջ և Հավատարիմ ու Հետևողական աշխատանքին Համար զոր այնքան անձնվիրաբար Հառաջ տարած է և կշարունակե տանիլ: Կօրհենեք Հիշատակը իր անմոռանալի տիկնոջ Մարգարիտ-Պայծառին, որուն Հոգին երկինքեն կբերկրի ի տես այս Մատենադարան-Վկայարանին:

Թող Աստուծո օրհնությունը արեւի լույսին պես շողա այստեղ: Թող Ս. Էջմիածնի խորհուրդը վառ մնա այս տան մեջ:

Աղոթարար՝

ԳՍՐԵԳԻՆ Ա

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Կահիրե, 18-1-1998»:

ԸՆԹՐԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ,

«ՆԱՅԼ ՀԻԼԹՈՆ» (NILE HILTON HOTEL) ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 21.30-ին, «Նայլ Հիլթոն» հյուրանոցի շքեղ հյուրասրահում, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, շուրջ 150 մասնակիցների ներկայությամբ, ակապին իշխանությունների կողմից տրվեց պաշտոնական ընթրիք:

Ճաշկերության գեղարվեստական հայտագրի բացման խոսքով հանդես եկավ տիար Կարպիս Յապրճյանը: Ասմունքով ու մեներգերով հանդես եկան տիկին Նորա Ապատյանը և տիար Գրիգոր Փարթամյանը:

Ճաշկերության ընթացքում ելույթ ունեցավ ՀՀ Կրոնից գործոց պետական կոմիտեի նախագահ Լապար Սուրյանը՝ վկայելով, որ Վեհափառ Հայրապետը իր հովվապետական բոլոր այցելությունների ժամանակ ընդունվում է մեծ ջերմությամբ, և շնորհակալություն հայտնեց նաև եգիպտահայության ցուցաբերած ջերմ ու սիրալիր ընդունելության համար:

Իր խոսքում Կահիրեի Թեմական ժողովի ատենապետ տիար Մնդրանիկ Մեսրոպյանը նշեց հովվապետական այս այցելության կարևորությունը գաղութի համար և ուժ ու կորով մաղթեց Վեհափառ Հայրապետին՝ իր եկեղեցաշեն ծառայության ու բարձր պատասխանատվության ճանապարհին:

Արագածոտնի նորակապվ թեմի աշխատանքների մասին պատմող հակիրճ խոսքով հանդես եկավ թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կոթյանը՝ առանձնակի ասելով:

«Զերգ Սրբություն, բարեպաշտ տիարք և տիկնայք:

Այս օրերին մենք վայելում ենք այն առիթը, որ ընծայված է մեզ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից, որպես անհամ իր չբախմբի:

Այսօր, երբ մեզ պատիվ ընծայվեց պատարագել Սուրբ Գրիգոր առաջնորդանիստ եկեղեցում, մեր նվիրական պարտքը եղավ աղոթելու առ Աստված, որ մեր Տերը իր զորավոր աջով ավելի ևս աշխուժացնի եգիպտահայ Համայնքի կյանքը: Մենք կուգնայինք, որ դուք էլ նման այցելությամբ Հյուրընկալվեք Արագածոտնի Թեմում, որի առաջնորդն եմ ես: Արագածոտնի Թեմը նախկին վարչական, տարածքային չորս շրջանների միավորումն է. Ապարան, Արագած, Թալին և Աշտարակ: Պատմական

Հայաստանի Նիգ դավառի մի մասը, Արարատյան նահանգի, Արագածոտն գավառի մի մասը և Շիրակի դաշտավայրի Հարավային տարածքն է ընդգրկում: Ունի 220.000 բնակչություն, 115 համայնք, որից երեքը՝ քաղաքային: Ունի 177 եկեղեցիներ և վանքեր: Թեմը ստեղծվեց 1996 թվականի մայիսի 30-ին: Վեհափառ Հայրապետը արդեն Հինգ անգամ հովվապետական այցելություն է կատարել Արագածոտնի թեմ: Մեկ և կես տարվա ընթացքում թեմից ներս հսկայական գործ է կատարվել թե՛ շինարարական, թե՛ մշակութային, թե՛ հոգևոր, կրթա-գաստիարակչական ոլորտներում: Քանզված մեկ դպրոց, որ կառուցվել էր 1912-ին, 1996-ին հիմնովին վերանորոգվեց չիկագոյաբնակ 89-ամյա խորհրդիցի Ջիվան Կորոյանի սիրահոժար տրամադրած միջոցներով: Այսօր Վեհափառ Հոր հովանու ներքո այն կոչվում է տուն դպրության Մեսրոպ Մաշտոցի, որտեղ կազմակերպվելու են գիտական խորհրդածրոյներ, հանդեսներ, գեղարվեստական ներկայացումներ, ցուցահանդեսներ: Անցյալ տարվա նոյեմբերի 18-ին և դեկտեմբերի 2-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ արդեն գումարվեցին Հայ մտավորականության գիտական ժողովներ, որոնց ընթացքում գիտական ծրագիրը, նրա գործունեության շրջանակը և հետագա անելիքները որոշվեց, քանի որ կարճ ժամանակ է մնացել, որպեսզի ապրիլի 24-ին մենք Հանդիսավորությամբ բացումը կատարենք այդ դպրության շենքի:

Հոկտեմբերի 11-ին, Սրբոց Թարգմանչաց տոնի օրը, բացվեց Արագածոտնի թեմի առաջնորդարանի դռները՝ ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Սա երկրորդ շինարարական կարեոր լուրջ աշխատանքներից մեկն էր:

Ապրիլին սկսեցինք և նոյեմբերին ավարտեցինք Կարբի գյուղի 17-րդ դարի Սուրբ Աստվածածին եկեղեցու վերանորոգման աշխատանքները: Նաև հիմնովին կառուցվեց նրա Հարավային մասում գտնվող երիցատունը: Բարեբարը Արմեն Մատուրյանն էր:

Հոկտեմբերի 1-ին սկսվել են Բյուրականի Ս. Հովհաննես եկեղեցու վերանորոգման աշխատանքները, որոնք Ֆինանսավորվել են Դանիա-Հայաստան գրասենյակի կողմից:

Գառնահովտի Հնագույն և գեղեցիկ տաճարի՝ Ս. Գևորգի վերանորոգչական աշխատանքները դրեթե 90 տոկոսով Հասել են ավարտին: Սրանք մի մասն են թեմի եկեղեցիների շինարարական աշխատանքների: Մենք, Հունիս ամսից սկսյալ, հրատարակում ենք թեմի թերթը՝ «Շողակ ամօրյա» վերնագրով: Ձիկագոյից դուկո. Բաֆֆի և Շողակ Հովհաննիսյաններն են հովանավորները: Ունենք մանկական ազգագրական խմբեր, ուր Հայեցի և Հայրենասիրական դաստիարակություն ենք ապահովում խմբակներին անդամակցող երեխաների համար:

Թեմից ներս նախատեսված են հսկայական շինարարական աշխատանքներ: Համոզված կարող եմ ասել, որ շնորհիվ Վեհափառ Հայրապետի, թեմական կյանքի փոփոխությունը աննախընթաց է, և կարող ենք բաղդատել Հայաստանի անկախության հետ, որպես կարևորագույն իրադարձություն: Առաջին և ամենաակնառու քայլը եղավ մեր տարածքների եկեղեցական առումով հզորանալու ուղղությամբ տարված աշխատանքները: Հունիս ամսին վեց նոր եպիսկոպոսներ ձեռնադրելով և նոր թեմերի ստեղծումով հզորացրեց Հայ Եկեղեցին: Բացվեց մի լուսավոր էջ, և այդ լուսավորության կայունությունը արդեն մենք է, որ պետք է պահենք: Այս տարի, ապրիլի 4-6-ը, մեր թեմից ներս կազմակերպվելու են ուխտա-

գնացություններ՝ 1700-ամյակի շրջագծում: Ես բոլորիդ սիրով հրավիրում եմ մեր թեմ: Մենք նաև թեմում ունենք լուրջ խնդիր, որ է Հոգևոր սպասավորների պակասը: Տասը գործող եկեղեցի ունենք, սակայն Հինգ քահանայով, թեմական խորհուրդ, որ ստեղծվել է 1996-ի դեկտեմբերի 11-ին, իսկ նույն ամսի 27-ին վավերացվել Ամենայն Հայոց Հայրապետի կողմից, և նաև՝ ծխական խորհուրդ:

Խոսքս ուղղում եմ վերջացնել՝ հիշելով այն մեծ բարերարներին, որոնք զոհաբերումով գործըացրել են եգիպտահայ թեմը: Աղոթքս է, որ այս թեմը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովանու ներքո և թեմի բարեխնամ առաջնորդ Զավեն արքեպիսկոպոս Ջինչիկյանի գլխավորությամբ, կարողանա նոր լիցք և ուժ ստանալ ու դառնալ է՛լ ավելի օրինակելի համայնք»:

Այնուհետև Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Ջինչիկյանը ամփոփ կերպով ներկայացրեց վեհափառ Հայրապետի ցարդ ունեցած հանդիպումները և կոչ ուղղեց եգիպտահայությանը, այս հովվապետական այցելությամբ օրհնված, հավելյալ աշխատունակություն և աշխուժություն դրսևորել ավգային, կրոնական, կրթական, մշակութային ու բարեսիրական գործունեության բնագավառներում, և ապա հրավիրեց Նորին Սրբությանը՝ իր հայրապետական պատգամը տալու:

Իր հայրական խոսքից առաջ Ամենայն Հայոց Հայրապետը նախ ավգային բարերար տիար Երվանդ Թումայանցի կուրծքը վարդարեց «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանով՝ ի գնահատումն ավգային, եկեղեցական ու մշակութային կյանքում նրա ունեցած երկարամյա ծառայության:

Այնուհետև թեմական ժողովի ատենապետ Անդրանիկ Մեսրոպյանը եգիպտահայ գաղութի անունից Հայոց Հայրապետին ընծայեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին պատկերող ոսկյա հուշանվերը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ս Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրական խոնքում ընդգծեց պատմությամբ հպարտանալով և նրանից օգտվելով դեպի ապագան նայելու անհրաժեշտությունը, շեշտեց, որ յուրաքանչյուր սերունդ պատմությունից ժառանգած ավանդին մի բան ավելացնելու և այն վարգացնելու պարտավորությունն ունի:

«Սիրելի սրբազան եղբայր, Հոգևոր եղբայրներ, մեծարգո դեսպան Հայաստանի Հանրապետության, թեմական իշխանության ներկայացուցիչներ և սիրելի սեղանակիցներ:

Իմ սրտագին շնորհակալությունները թեմի բարեխնամ առաջնորդին, մեր թեմական խորհրդին, քաղաքական ժողովի անդամներին և նրանց ընտանիքներին: Ապրե՛ք և ավելի ճոխ ապրե՛ք Հայուիթյան, ձեր ապրումների մեջ: Այստեղ կուգեի մի փոքրիկ պատկեր գծել: Եթե նկարիչ լինեի, նկարչությամբ պետք է այդ պատկերը արտահայտեի: Սակայն խոսքը վրձնի տեղ ընդունեք, բռներս՝ վրձնի հարվածներ: Ես եգիպտահայությանը եգիպտոսի մեջ տակավին ամբողջական չճանաչած, ճանաչեցի պատուհանից և ոչ թե դռնից: Մոնթեալում 45 տարի առաջ, 1963-ին, ես ճանաչեցի եգիպտահայությանը, երբ այնտեղ էի վարդապետի աստիճանով: Մի համալսարանում համաշխարհային քրիստոնեական ժողով կար կազմակերպված «Հավատք և կարգ» կոչված կազմակերպության կողմից, ուր բազմահարյուր աստվածաբաններ էին եկել: Մեկ եկեղեցի կար Մոնթեալում և այնտեղ պատվական Բաստմաջյան եղբայրները կային, որ, փառք Աստուծո, դեռևս

մենք Ոսկեդար ունենք: Ոսկեդարում քանի՜ միլիոն մարդ ապրեց Հայաստանում, սակայն 10-20 անուն մնաց պատմության մեջ. Ս. Մեսրոպ, Նդիշե, Կորյուն, Նդնիկ, Փարպեցի, Խորենացի, քաջ Վարդան... Աշխարհի կյանքը կդառնա Աստծու մարդկանց տված կարողությունների գործածմամբ և այդ գործի դարգացմամբ է, որ մարդը կմնա: Դրա համար ես այսօր հարգանք եմ ընծայում բոլոր նրանց, ովքեր այստեղ ծառայեցին այս Հողի վրա, Եգիպտոսի հավերժությունն բուրոդ Հայության անունը բարձր պահող և այժմ երկնքից մեզ դիտող անձերի հանդեպ հարգանք: Այսօր, ինչ որ լսեցի ձեր խակպես նվիրյալ, լուսամիտ և աշխարհի կացությանը ծանոթ նախագահից, որ ասաց, թե իրենց համար բոլոր եգիպտաբնականները հավասար են: Եվ ես այն ժամանակ իրեն հետևյալ պատմությունը պատմեցի. մի օր Բոստոնում հայերը մեծ ճաշկերույթ են տալիս և հրավիրում են նաև ոստիկանապետին: Այս մարդը տեսնում է, որ 500-ից ավելի մարդիկ են հավաքված սեղանների շուրջ և փառավոր ճաշում են խաղաղ, դանդաղ, գեղարվեստական հայտադրով և իրեն էլ են խոսք տալիս: Նա ասում է. «Ես չգիտեի, որ այսքան հայեր կան իմ քաղաքում, որովհետև հայ Հանցագործի, հայ ռեպարտի ես չեմ հանդիպել: Եվ պատիվ է ձեռք»: Դա մեզ համար խակական մեր արժանիքի ճանաչումն է: Եվ դուք այդ պատիվը պայծառ պահելու պարտքը ունեք: Պողոս Նուբար փաշան Հայ Բարեգործական Միությունը հիմնել է այստեղ, դա պատմության տուրքն է: Հայկական Բարեգործական Միությունը այսօր իր գործունեությամբ առավել ևս պետք է ճոխացնի Պողոս-Նուբար փաշայի ժառանգը և այդ մեծ կազմակերպության բերելիք բաժինը: Այստեղ դեմքեր են և կել Օհանջանյանի, Լևոն Շանթի, Դանիել Վարուժանի, Ռուբեն Սևակի, Գրիգոր Ջոհանյանի նման:

Հիշեք թե ինչպե՞ս Այգյոյանյաններ, Բենիամին Թաշյաններ և ուրիշներ կրակ վառեցին յուրաքանչյուրիս մեջ: Մի՛ մարեք այդ կրակը: Այդ կրակը փոխանցեք նոր սերնդին: Այս է մարդկային պատմության, մարդկային կյանքի իմ փրկիսփայությունը: Եթե ես ավելին չեմ անելու, քան իմ հայրն է արել, ինչպե՞ս կարող եմ նրա արժանի որդին լինել: Այդ մարդը արեց այն, ինչը որ իր ժամանակ հնարավոր էր, իսկ ես, որ կյանքի փոփոխությունների զարգացման ավելի բարձր ընթացքի եմ հասել, ավելին պետք է անեմ: Նա, ով իր նախնիների թողած ժառանգությամբ է ապրում, ես այդ սերնդին նմանեցնում եմ դրամադլիսով ապրող սերնդի, այլ ոչ թե դրամադլիս ստեղծող, հիմնադիր սերնդի: Եվ այսօր, քանի որ մեր դեսպանը այստեղ է և պարոն Սուլյանը՝ կրոնից գործոց կոմիտեի նախագահը ևս, ես ուզում եմ իրենց ներկայությամբ ձեր բոլորի Հեռ բաժանել խոսքս: Մի՛ թողեք, որ Հայաստանը միայն իր անցյալով փառավոր լինի, դա դավաճանություն է հանդեպ Հայաստանը: Մեծերին հարգելը պարտք է, սակայն նրանց հարգելը գործով չճոխացնելը, չավելացնելը՝ դավաճանություն: Հետևաբար, այս շրջանը վերակերտման և վերանորոգության շրջան է հայ ժողովրդի համար:

Ես այժմ Հայաստանում եմ ապրում: Հայաստանը մեզ համար ի՞նչ էր, մինչև չտեսանք, չշոշափեցինք այն, մեր կյանքը նրա կյանքի մեջ չխառնեցինք: Հայաստանը իմ գյուղում, դասագրքում անուն էր, ծանոթություն: Դրում էինք, արտասանում: Քարտեզի վրա հայոց գետերն էինք ցույց տալիս, լճերը: Սակայն միայն պատկեր էր այդ, ինչպե՞ս ձեռքից չատերի համար այսօր: Հայաստանի մասին մենք այն ժամանակ ասում էինք ողբի, որբի Հայրենիք: Սակայն այսօր Հուլիսի Հայրենիք է: Մեր Եկեղեցին իր ամբողջության մեջ կոչված է մեկ առաքելության՝ վերադարձնել Հային իսկական հայությունը, ոչ թե օտարներից մեզ վրա պարտադրված չպարը:

Հոգիները: Այս ամենը պետք է կատարել մեր առաքելության բացարձակ գիտակցությամբ: Ասել, թե մեր եկեղեցին Առաքելական է՝ առաքյալների կողմից հիմնված լինելու համար, ամբողջական չի լինի: Առաքելական է, քանզի այսօր առաքելություն ունի: Տոնելու ենք մեր եկեղեցու 1700-ամյակը: Երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի և Շրնուդա Պատրիարքի հետ ներկա եղա Ռուս Օրթոդոքս եկեղեցու 1000-ամյակին նվիրված տոնակատարությունը և այնտեղ խոսած իմ ճառում ասացի, որ մենք էլ պատրաստվում ենք 2001-ին տոնել մեր եկեղեցու 1700-ամյակը, և սա ազգային հպարտություն, սնապարծություն չէ: Աշխարհում չկա մի եկեղեցի, որ այսքան քրիստոնեական պատմություն ունի:

Հազարավոր մարդիկ են գալու Հայաստան, սակայն ի՞նչ պետք է ցույց տանք. խոսով ծածկված գմբեթներ: Սա չի վայելի հայի պատվին և անունին: Ամբողջ Երևան քաղաքում մի եկեղեցի չունենք, ուր 200 մարդ կարողանա նստել: Այս վիճակը տեսնելով, ձեռքներս ծայելք և 1700-ամյակով հպարտանանք: Մեղք է այս ազգը: Ահավասիկ, մի մեծ եկեղեցի կառուցելու ծրագիր ունենք, որը Երևանի Մայր եկեղեցին է լինելու և խորհրդանշանակորեն ունենալու է 1700 նստելիք տեղ: Եթե յոթերորդ դարում Կոմիտաս Կաթողիկոսը, առանց էլեկտրական ուժի, առանց մեքենաների Հոփսիմին նման եկեղեցի կառուցեց, ապա ի՞նչ է պակասում մեզ, որ մենք այսօր եկեղեցի կառուցենք և կամ չվերակառուցենք ներկայիս քանդված բազմաթիվ եկեղեցիները: Մենք կա՞մ պատմություն ենք ստեղծում և կա՞մ հիշում: Հիշողը Հիշողության հետ կանցնի, շինողը շինածի հետ կհավերժանա: Հետևաբար, բարեկամներ, ես այսօր եկել եմ, որպեսզի ձեռքներս միացնենք: Սպասում եմ ձեզանից, որ դուք էլ լրջորեն մտածեք: Նախ ազգային միության զորացման շուրջ: Ապրե՛ք, եզիպտահայեր, որ այսպես միակամ գաղութ կարողացաք մնալ մեր եկեղեցու շուրջ՝ յուրաքանչյուրդ պահելով ձեր գաղափարական և կամ այլ կարգի ազատությունը, Դուք սքանչելի կերպով, այլազանության մեջ, միություն ստեղծեցիք՝ առանց ջնջելու այլազանությունը: Կարողացաք ներդաշնակել այլազանությունը միության հետ:

Երկրորդ. այլևս դուրս գանք անտարբերության, մի տեսակ անհոգության հոգեբանությունից: Մեզ չի կարելի: Ես այնպես եմ զգում, որ ջարդերից ազատված և անկասաքած ազգը չի կարող ուրիշների նման ապրել, պետք է իմանա զոհողություն անել և դրա մեջ իր առավելությունը տեսնել: Եվ ես այնպես եմ զգում անձնապես, որ քո տվածը քեզանից ավելի մեծ, հավիտենական արժեքի համար, անմահացնում է քեզ:

Այս ամռանը, Հոկտեմբերի 11-ին, դեպի 13-րդ դարում կառուցված մի եկեղեցի, որը գոհար է եղեգնաձորի շրջանի մեջ՝ Արենիի եկեղեցին: Գնացի նախադահելու օծման արարողությունը: Որտե՞ղ է Մոմիկ վարդապետի գերեզմանը, ի՞նչ մնաց նրանից. այն, ինչ որ տվեց: Ինչ որ քո մեջ ես պահում, խեղդվում է: Այս տեսակետով ուզում եմ խոսքս այլևս փակել՝ ասելով, որ տակավին առիթ կունենամ դպրոցական սերնդի հետ խոսելու: Այսօր ես ասում եմ, որ եթե ուզում եք այս այցելությունս իմաստավորվի, եկեք և տեսեք Հայաստանը: Այն այլևս ձեզ համար թող չմնա սոսի ծանոթություն, գիր, անուն, պատկեր: Խառնեք այն ձեր էության հետ՝ իր լավ և վատ կողմերով:

Ես ուրախ եմ, որ հայ եմ, որովհետև իմ երկրում, Արարատի փեյերին, տակավին 5-րդ դարում, Աստվածաշունչ էր թարգմանվում: Ինչո՞ւ չհպարտանամ, սակայն հպարտությունս մասնակցությամբ, ծառայությամբ արժեցնեմ: Սա է կյանքի միակ փրկափայտությունը այսօր յուրաքանչյուր

Հայի Համար: Հետևաբար, արժևորենք մեր Հպարտությունը ի փառս Աստուծո և ի բարօրություն Հայաստան աշխարհի Հավիտյանս Հավիտենից. ամեն»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Հունվարի 19-ին, երկուշաբթի օրը, ժամը 17.00-ին, Նորին Սուրբ Օծությունը Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդարանում հանդիպում ունեցավ տեղական լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ:

Մամր ասուլիսին ներկա էին «Արև», «Հուսաբեր», «Ջահակիր» և «Տեղեկատու» լրագրերի թղթակիցները:

Շուրջ մեկ ժամ տևած հարցազրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը ամենայն մանրամասնությամբ պատասխանեց Լեոնուսյին Ղարաբաղի հիմնահարցին, Հայաստանի Հանրապետություն ներթափանցած աղանդներին, Մայր Աթոռ - Մնթիվիսս փոխհարաբերություններին, Հայրենիքում մեծ թափ ստացած հոգևոր վերապարթոնքին վերաբերող հարցերին:

ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ՝ ՎԵՀԱԾԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ

Նույն օրը, երեկոյան ժամը 20.00-ին, թեմի առաջնորդարանի սրահում գումարվեց հերթական թեմական ժողովը՝ Նորին Սրբության բարձր նախագահությամբ:

Հրնթացս ժողովի, Վեհափառ Հայրապետը ամենայն մանրամասնությամբ ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և Հայաստանի մյուս թեմերում իր գահակալության տարիներին կատարված, ինչպես նաև կատարվելիք աշխատանքները, ծանոթացրեց մոտալուտ խնդիրներին, անելիքներին, հույս հայտնեց, որ ամեն մի ծրագիր, Տիրոջ կամոք և հովանավորությամբ, պսակվելու է հաջողությամբ:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՆՈՒԲԱՐՅԱՆ ԵՎ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Հունվարի 20-ին, առափոյտյան ժամը 11.30-ին, Նորին Սուրբ Օծությունն իր շքախմբի ուղեկցությամբ այցելեց Նուբարյան և Գալուստյան Ազգային վարժարաններ, ուր ընդունվեց ջերմ սիրով և խանդավառությամբ: Ապա վարժարանների տնօրեններ Վարուժան Գապանձյանի և Սիմոն Չամբերթենյանի, ինչպես նաև ուսուցչական կազմերի հետ առաջնորդվեց դեպի «Պրլքտանյան» սրահ և ներկա գտնվեց ի պատիվ իր այցելության կազմակերպված գրական-գեղարվեստական գեղեցիկ հայտագրին:

Հավարտ հայտագրի, Վեհափառ Հայրապետը մտերմիկ զրույցի բռնվեց սրահում ներկա մեծաթիվ սաների հետ՝ իր հայրական հորդոր-խրատներում կարևորելով ուսման կարևորությունն ու անհրաժեշտությունը, առանձնացնելով երեք իիմնական կետ, այսինքն՝ Նորին Սրբությունը պատգամեց, որպես կյանքի ուղեկիցներ, հոգու ամենանվիրական անկյունում անթեղել «Հայրենիք», «Նպատակ», «Մեր» հասկացությունները, միաժամանակ մանրամասնեց յուրաքանչյուր բառի իմաստային կարևորությունը և մեծ նշանակությունը:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ «ԱՅԾԵՄՆԻԿ» ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՈՒՆ

Օրվա երկրորդ կեսին, ժամը 14.00-ին, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով այցելեց «Այծեմնիկ» հանգստյան տուն, որտեղ մշտական բնակություն են հաստատել և «Այծեմնիկ» տիկնանց միության մշտական խնամակալությունն են վայելում եգիպտահայ համայնքի ջուրջ 28 տարեց անդամներ:

Նորին Սրբությունն իր ջերմ գրույցի ընթացքում ավելի մոտիկից ծանոթացավ նրանց առօրյա կյանքին, նիստ ու կացին, կենցաղին: Վերջում փոխանցեց իր հայրական օրհնությունը և խոստացավ պատեհ առիթով կրկին այցելել իրենց խաղաղ ծերությունն այս հանգստյան տանն անցկացնող տատիկներին ու պապիկներին:

Վեհափառ Տիրոջ այցելությունը մեծ խանդավառություն առաջացրեց հանգստյան տան բնակիչների մոտ:

ԸՆԹՐԻՔ «ՀԻԼՏՈՆ» (HILTON)

ՀՅՈՒՐԱՆՈՅՈՒՄ

Ուշ երեկոյան, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, «Հիլթոն» (Hilton) հյուրանոցի գեղեցիկ սրահում, Թեմական ժողովի ատենապետ տիար Մնդրանիկ Մեսրոպյանի կողմից տրվեց ընթրիք, որին ներկա էին տեղական իշխանությունների և քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, մեծաթիվ ազգայիններ:

Ընթրիքի ընթացքում ծայր առած մտերմիկ գրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց տիար Ա. Մեսրոպյանի և Թեմական խորհրդի մյուս անդամների հայրենասնվեր ու ազգապահպան գործունեությունը, ինչպես նաև այն ջերմ սերը, որ նրանք տածում են դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Նորին Սուրբ Օծությունը առանձնակի մանրամասնությամբ ներկաներին ծանոթացրեց իր շքախմբի անդամների հետ, նշեց նրանց կատարած գործի կարևորությունը, առկա դժվարությունները և այն բոլոր ուղիները, որոնցով նրանցից յուրաքանչյուրը գնում է դեպի հաղթանակ:

ՀԱՆԳԻՊՈՒՄ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

Հունվարի 21-ին, առավոտյան ժամը 10.30-ին, Նորին Սուրբ Օծությունը «Marrriott» հյուրանոցի իր հարկաբաժնում ընդունեց Եգիպտոսում Լիբանանի արտակարգ և լիազոր դեսպան տիար Դիմաշկիեին:

Պաշտոնական հանդիպմանը ներկա էր նաև Եգիպտոսում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Էդուարդ Նալբանդյանը:

Հանդիպման ընթացքում երկուստեք շոքափվեցին երկու բարեկամ երկրների քաղաքական, տնտեսական, մշակութային խնդիրներին առնչվող հարցեր, Հայ Եկեղեցու դերը, էկոլոգիկ շարժման բնագավառում, ինչպես նաև շեշտվեցին այն ուղիները, որոնք տանում են դեպի բարեկամության խորացում և ժողովուրդների բարեկեցություն:

Վեհափառ Հայրապետը վերհիշեց նաև Լիբանանում իր ապրած և գահակալած տարիները:

ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՄԱՅԱՆՑ ԸՆՏԱՆԻՔԻ ԿՈՂՄԻՅ

Երեկոյան ժամը 20.30-ին Վեհափառ Հայրապետը հյուրընկալվեց Թումայանց ընտանիքի կողմից՝ ի նշանավորումն ժերունապարդ Երվանդ Թումայանցի «Ս. Սահակ և Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրման:

Բարեկամական ընթրիքին ներկա էին Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Է. Նալբանդյանը, թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Չավեն արքեպ. Չինչինյանը, Նորին Սրբության շքախմբի անդամները, հնչպես նաև հայ համայնքի վաստակաշատ ներկայացուցիչներ:

Մտերմիկ զույցի ընթացքում Վեհափառ Տեքը կրկին անգամ կարևորեց Ե. Թումայանցի մատուցած ապագապահպան, հայրենանվեր և եկեղեցաշեն գործունեությունը, նշեց, որ այսօր առավել, քան երբևէ Հայրենիքն ու Հայոց Եկեղեցին իրենց զավակների սիրո ու նվիրումի կարիքն ունեն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ՄԻՐԻԱՅԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ԻՍԱ ԴԵՐ ՈՒԻՇԻ ՀԵՏ

Հունվարի 22-ին, առավոտյան ժամը 11.00-ին, Ամենայն Հայոց Հայրապետն իր հարկաբաժնում ընդունեց Եգիպտոսում Սիրիայի արտակարգ և լիազոր դեսպան Իսա Դեր Ուիշին:

Պաշտոնական հանդիպմանը ներկա էր նաև Եգիպտոսում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Է. Նալբանդյանը:

Բարեկամական ջերմ մթնոլորտում ընթացող զրույցի ժամանակ թե՛ Նորին Սուրբ Օծությունը և թե՛ դեսպան Իսա Դեր Ուիշին կարևորեցին ոչ միայն երկու երկրների համագործակցությունը տարբեր բնագավառներում, այլև երկու ժողովուրդների վաղեմի բարեկամությունը, միմյանց կողքին լինելու և միմյանց մշտապես օգնելու պատրաստակամությունը: Ապրելով կողք-կողքի՝ երկու ժողովուրդներն էլ, ճակատագրի բերումով, պատմականորեն ընդհանուր գծեր ունեն և այսօր արդեն առավել սերտորեն են համագործակցում:

ԱՅԼ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Նույն օրը, երեկոյան ժամը 18.00-ին, դարձյալ իր հարկաբաժնում, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաջորդաբար ընդունեց «Հուսաբեր» մշակութային և «Արև» գեղարվեստասիրաց միությունների անդամներին և զույցներ ունեցավ նրանց հետ:

Վեհափառ Հայրապետը ներկաներին հորդորեց ավելի ամուր կառչել հարապատ Եկեղեցուն, հավատարիմ մնալ նախնայաց ավանդներին և մշտապես վառ պահել հայրենասիրության ոգին: Հայրենիքը միայն բառ չէ, - հիշեցրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը, - այսօր այն իրականություն է, որ իր լուսաշող պատմությունն է կերտում որպես ապատ ու անկախ մի հանրապետություն: Յուրաքանչյուր հայորդու նվիրական պարտքն է իր կարողությունների սահմաններում սատար կանգնել վերանկախացյալ Հայաստանին՝ էլ ավելի մեծ նվաճումների համանշտ համար:

ՊԱԵՏՈՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ՝ Ի ՊԱՏԻՎ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ

Ավելի ուշ, ժամը 21.00-ին, ի պատիվ Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհապետ Հայրապետի, «Հուսարներ» մշակութային միության կողմից տրվեց պաշտոնական ընթրիք, որին ներկա էին պետական, հոգևոր բարձրաստիճան ալրեր, միության անդամներ, մեծաթիվ ազգայիններ:

Ընթրիքն անցավ բարեկամական ջերմ մթնոլորտում: Սրտամտ ու ցանկալի համարելով Վեհապետ Հայրապետի խրատ-հորդորները, միության անդամները ցանկություն հայտնեցին իրենց նյութական նպաստը բերել Հայրենիքի վերապարթոնքին: Նրանք խնդրեցին Նորին Սրբությանը, որպեսզի օգնի իրենց՝ Հայրենիքում որևէ եկեղեցի վերանորոգել 25.000 ԱՄՆ դոլլարի սահմանում:

Հայոց Հայրապետը նախ իր շնորհակալությունը հայտնեց միության անդամների ազնիվ արարքի համար, ապա խոստացավ մոտ ապագայում անպայման օգնել նրանց:

Հանդիպման վերջում Նորին Սրբությանը հանձնվեց հուշանվեր:

ՀՐԱԺԵՇՏԻ ՃԱԸ ՀՀ ՂԵՍԱԿԱՆԱՏԱՆԸ

Հունվարի 23-ին, երեկոյան ժամը 20.30-ին, ՀՀ ղեսպանատանը, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, ղեսպան Է. Նալբանդյանի կողմից տրվեց հրաժեշտի ընթրիք, որին ներկա էին բարձրաստիճան պաշտոնյաներ, դիվանագիտական ալրեր, քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, մեծաթիվ ազգայիններ:

Պարոն ղեսպանը Նորին Սրբությանը ծանոթացրեց ղեսպանատան աշխատակազմին, ինչպես նաև կատարված ու կատարվելիք աշխատանքներին, միաժամանակ իր խորին շնորհակալությունը հայտնեց եգիպտահայ թեմի բարեխնամ առաջնորդին՝ իրենց բոլոր հարցերում աջակցելու համար:

Իր հերթին Հայոց Հայրապետը մեծ ոգևորությամբ նշեց, որ ղեսպանատան շենքը մի փոքրիկ Հայաստան է Հայրենիքից հեռու, իսկ այսքան հեռվում ապրող յուրաքանչյուր հայորդի պետք է ամեն գնով բարձր պահի հարապատ ժողովրդի ու հայրենի երկրի պատիվը:

Նորին Սրբությունը նաև բարձր գնահատեց հարգարժան ղեսպանի դժվարին, սակայն հմուտ դիվանագիտական գործունեությունը և հույս հայտնեց, որ նա է՛լ ավելի իմաստուն և խոհեմ քաղաքականությամբ սեփական Հայրենիքը կներկայացնի հեռավոր Եգիպտոսում:

ՄԵԿԼՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱ

Հունվարի 24-ին, ավարտելով իր անդրանիկ հովվապետական-հայրապետական այցելությունը Եգիպտոսի հայոց թեմ, Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով ժամը 19.10-ին մեկնեց Գերմանիա՝ իր հավատավոր հոտին այցելության: